

«ԵՐՐՈՐԴ ՈՒԺ» ԲՈՉԱՐԵԱՆԻ ԴԵՄ

ՅԱԿՈԲԱՆԱԼԵԱՆ

Առաջիկայ քաղաքական գործընթացներին ակտիվորեն ներգրավելու յայտ է ներկայացրել ԱժՄ-ն: Կուսակցության նախագահ, Հանրային Խորհրդի նախագահ Վազգեն Մանուկեանն ու նրա ներկայ կամ նախկին կուսակիցները, որոնք լքել են ԱժՄ-ն եւ իրենց կուսակցությունները ստեղծել, չեն թաքցնում, որ քննարկում են վերամիավորման հարցն ու պատրաստում ակտիվ մասնակցել ներքաղաքական կեանքին:

ԱժՄ-ն այն ուժն է, որը ներքաղաքական կեանքին «հրաժեշտ» տուց 2008 թվականի նախագահի ընտրությունից յետո: 2008 թվականի Հայաստանի քաղաքական կեանքում նշանակալի էր նաեւ հենց այն պատճառով, որ քաղաքական դաշտը զգալիորեն փլուզվեց: Դրանից դուրս մնացին ԱժՄ-ն, Գեղամեանի կուսակցությունը, էլի մի քանի այլ կուսակցություններ, որոնք իրենց քաղաքական գործունեության վերջին տարիներն ընդամենը ինքնուրույն ուժով էին անցկացնում: Հասարակական տեսադաշտը փակող կամ քաղաքական կեանքի բեռ դարձած այդ ուժերի դուրսընթացը կարելի է համարել Լեւոն Տէր-Պետրոսեանի քաղաքական վերադարձի կարեւոր արդիւնքներից մէկը:

Սերժ Սարգսեանն էլ կարծես թէ անմասն չմնաց այդ արդիւնքի «դափնին» կիսելուց, քանի որ այդ ամենին հաւաքեց իր մօտ՝ իշխանական ճամբար, ինչը մեկընդմիջաբացայացեց այդ ուժերի անակուսակցությունը: Չէ որ իշխանական ճամբարը «քաղաքական աղբանոց» է, նկատի ունենալով այդ համակարգի ապաքաղաքական բնույթը, կառուցուածքը եւ փոխադրվածությունները:

Բայց այժմ կարծես թէ նկատուում է «աղբանոցից» նրանց վերադարձի միտում: ԱժՄ-ն խօսում է այդ մասին բացայայտ, հաւանաբար շուտով այդ խօսակցություններին միացնել Խոսրով Յարու-թիւնեանը, ով կարծես թէ նոյնպէս յայտարարել է խորհրդարանի ընտրությունները մասնակցելու մտադրություն մասին: Յետոյ գուցէ Արամ Գասպարիչ, Օստապ Իբրահիմովիչ, գուցէ այլք, կը լցուեն դաշտ:

Ինչու: Միթէ Սերժ Սարգսեանը նրանց հաւաքել էր «քաղաքական աղբանոցում», որպէսզի յետոյ բարդ իրավիճակում նետէր քաղաքական դաշտ եւ նորից «գարշահոտություն» տարածեր այնտեղ, թէ պարզապէս այդ մարդիկ գոհ չեն Սերժ Սարգսեանից եւ ուզում են նրանից աւելի լաւ պայմաններ կորզել առաջիկայ գործընթացի

համար:

Հաւանաբար գործ ունենք առաջին տարբերակի հետ, քանի որ հազիւ թէ այդ ուժերն ունեն երկրորդի հնարաւորություն: Բանն այն է, որ նրանք իրենցից ոչինչ չեն ներկայացնում եւ չեն կարող ոչ մի պայման թելադրել եւ իրենց քաղաքական ակտիվությունները պայման թելադրել Սերժ Սարգսեանին:

Քաղաքական ակտիվություն նրանց ըստ ամենայնի Սերժ Սարգսեանն է թելադրում: Բայց այս անգամ կարծես թէ նրանք ունեն այլ գործառույթ, կան օրինակ իրականացնում էին 2008 թվականի ընտրարշաւում: Այն ժամանակ այդ ուժերի բուն գործառույթը Լեւոն Տէր-Պետրոսեանին հարուածելն էր:

Ներկայում այդ խնդիրը թերեւս ենթարկուել է փոփոխություն, ելնելով ներքաղաքական զարգացման տրամաբանություններից: Սերժ Սարգսեանն այդ ուժերին այժմ թերեւս ակտիվացնում է կամ ոչ այնքան Տէր-Պետրոսեանի, որքան Ռոբերտ Քոչարեանի դէմ, կամ էլ հաւասարապէս թէ Տէր-Պետրոսեանի, թէ Քոչարեանի: Բայց, աւելի շատ թերեւս Քոչարեանի, ով ակնարկել է իր հնարաւոր ակտիվությունները մասին եւ ում ակնարկը Սերժ Սարգսեանը կարծես թէ բաւական լուրջ վտանգ է համարում:

Բանն այն է, որ այդ «վերա-

կենդանացող» ուժերով այլեւս հագիւ թէ հնարաւոր լինի հական հարուած հասցնել Տէր-Պետրոսեանին: Քաղաքական դաշտում ներկայումս ստեղծուել է մի վիճակ, երբ Տէր-Պետրոսեանից աւելի լաւ ոչ ոք չի կարող նրան հարուած հասցնել: Այդ իմաստով, Սերժ Սարգսեանին կարող է օգնել միայն ինքը Տէր-Պետրոսեանը:

Իսկ ահա Քոչարեանին «հարուածելու» մասով, «քաղաքական աղբանոցից» վերադարձով ուժերը կարող են Սերժ Սարգսեանին օգնել: Բանն այն է, որ երբ Քոչարեանն է ապէս ակտիվանայ, իշխանությունները խողովակներով նրան հարուածներ հասցնելը Սերժ Սարգսեանի համար կը լինի ոչ այդքան յարմար, քանի որ դա կարող է լուրջ պառակտում առաջ բերել իշխանական շրջանակում եւ վտանգել արդէն ամբողջ համակարգը՝ Սարգսեանին ու Քոչարեանին միասին:

Քոչարեանին իհարկէ կարող է լաւ հարուածել Տէր-Պետրոսեանի ընդդիմությունը: Բայց այդ դէպքում էլ մէկ այլ վտանգ կայ՝ կարող է խորանալ Տէր-Պետրոսեան-Սերժ Սարգսեան ուղղակի կամ անուղղակի գործակցություն կասկածը, ինչը կը ձեւաւորի մի ընդհանուր միջոցառում, որը էլ աւելի պարարտ ներիշխանական հող կարող է ստեղծել Քոչարեանի վերադարձի համար, միեւնոյն ժամանակ էլ աւելի թուլացնելով Տէր-Պետրոսեանի շարժման հասարակական հողը:

Այդ իսկ պատճառով, թերեւս ամենաշահեկան տարբերակը կարող է լինել այսպէս ասած չէզոք, կամ «երրորդ ուժի» քննադատությունը Քոչարեանին, ով անուղղակի կերպով ինքն է փորձում ձեւաւորել այդ «երրորդ» քաղաքական բեւեռը: Այսինքն, Սերժ Սարգսեանը կարծես թէ փորձում է «երրորդ ուժ» հանել Ռոբերտ Քոչարեանի դէմ: «ԼՐԱԳԻՐ»

ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸԱՍԱԿԱՐԳԻ ՆԵՐՍՈՒՄ՝ ԶԱՆՏԱԺՈՎ ՈՒ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐՈՎ

ՄԱՐԿ ՆՇԱՆԵԱՆ

Քաղաքական դաշտում «կենացները քաղցրանում են»: Մի կողմից՝ ակներեւ է, որ անգամ հերթական ընտրությունների դէպքում Հայ ազգային կոնգրեսը ծանրակշիւ ներկայութիւն է ունենալու ապագայ խորհրդարանում, եւ դա ընդդիմադիր ուժերին ստիպում է կամաց-կամաց համախմբուել Կոնգրեսի շուրջ (կամ գոնէ ուղեւորաններ անել այդ ուղղություններ), միւս կողմից՝ իրավիճակը շատ աւելի լարուած է իշխանական դաշտում:

Երէկ բանը հասաւ նրան, որ էլեկտրոնային լրատուամիջոցներից մէկը (ակնյայտօրէն ՀՀԿ-ամեն) անցաւ բացայայտ շանտաժի եւ մի գարմանահրաշ վերլուծություններ ներկայացրեց այն մասին, թէ ինչ տեղի կ'ունենայ, եթէ պայմանները փոխուեն, եւ ԲՀԿ-ն դուրս գայ կոալիցիայից: Ըստ այդ «վերլուծությունների», ԲՀԿ-ի՝ կոալիցիայից դուրս գալու դէպքում այդ կուսակցության համակիրների 35,4 տոկոսը կը թեքուի ՀՀԿ-ի կողմը, 33,8 տոկոսը կը մնայ չկողմնորոշուած, 7,8 տոկոսը կը դառնայ ՕԵԿ-ի համակիր եւ այլն, եւ միայն 1,6 տոկոսը կը շարունակի համակրել ԲՀԿ-ին:

Լաւ «վերլուծություն» է, չէ՞: Աւելի շատ թշնամու ամբողջ գրաւելուց յետոյ աւարը կիսելու մասին համաձայնագիր է չիշեցնում: Ընդ որում՝ ակնյայտ է, որ ռեւէ մէկն այդպիսի ուսումնասիրություններն չի էլ կատարել, եւ թուերը պարզապէս օդից են վերցուած: Հակառակ դէպքում ինչպէ՞ս էք պատկերացնում, որ ինչ-որ մարդիկ ԲՀԿ անդամների շրջանում հարցումներ անցկացնեն ու

ճշդեն, թէ «եթէ կուսակցությունը կոալիցիայից դուրս գայ, ո՞ր կուսակցությունն է համակիրը կը դառնաք, եւ կուսակցությունը ղեկավարներն այդ հարցումների մասին տեղեակ չլինեն»: Ասենք՝ թուերի մէջ էլ տրամաբանություն չկայ: Լաւ, ասենք՝ ԲՀԿ-ն կոալիցիայից դուրս եկաւ, ինչո՞ւ պիտի այդ կուսակցությունն անդամների 7 տոկոսը մտնի «ժողովրդական կուսակցություն»: Որովհետեւ ԺԿ-ն ընդդիմադիր է: Բայց ԲՀԿ-ն էլ է դառնալու ընդդիմադիր (կոալիցիայից է դուրս գալու, բայց հո չի՞ լուծարուելու): Բացի այդ էլ, եթէ յիշում էք, ԲՀԿն սկզբից ձեւաւորուել է որպէս կուսակցություն, յետոյ ահագին ձայներ է հաւաքել եւ միայն դրանից յետոյ է դարձել կոալիցիայի անդամ: Նոյնը, ի դէպ, չի կարելի ասել ՀՀԿ-ի մասին: ՀՀԿ-ն սկզբում փոքր կուսակցություն էր, յետոյ (1995-ին) դարձաւ իշխող կոալիցիայի անդամ եւ միայն դրանից յետոյ հօրաքաւ: Բայց սրանք, ի վերջոյ, ներիշխանական «խոհանոցային» հարցեր են եւ ամենայն հաւանականութեամբ կը կարգաւորուեն: Մեզ տուեալ դէպքում բոլորովին այլ հարց է մտահոգում: Մեզ մտահոգում է իշխող կուսակցության վերաբերմունքը սեփական ժողովրդի նկատմամբ:

Բանն այն է, որ վերջին մի քանի համապետական ընտրություններում ԲՀԿ-ն բաւականին լուրջ ձայներ է հաւաքել՝ 15-20 տոկոս, եւ ինչ-որ չենք յիշում, որ որեւէ հանրապետական երբեւէ կասկածի տակ առած լինի այս թուերը: Խօսքն, ի դէպ, մօտ 200 հազար մարդու մասին է: Հիմա ահա հանրապետականներն անուղղակիօրէն յայտարարում են, թէ բա

զիտէ՞ք, այդ մարդիկ ձեզ ձայն են տուել ընդամենը նրա համար, որ դուք իշխանութիւն էք, հենց որ իշխանութիւն չլինէք՝ էլ ձեզ ձայն չեն տայ: Պարզ ասած՝ հանրապետականները վերաւորում են այդ մարդկանց, որովհետեւ նրանց պարզապէս «խոլոպներ» են համարում:

ԲՀԿ-ի դէպքում, սակայն, իրականութիւնը բոլորովին այլ է: Իհարկէ, եթէ այդ կուսակցությունը դուրս գայ կոալիցիայի կազմից, իսկապէս էլ բազմաթիւ մարդիկ կը լքեն կուսակցությունը: Բայց հաստատ՝ մի հինգ այդքան էլ կը մտնեն կուսակցություն: Ընդ որում՝ Սերժ Սարգսեանն ինքը շատ լաւ հասկանում է սա, դրա համար էլ «առաջին դէմքերի մակարդակով» իշխող կոալիցիայում ամէն ինչ կարգին է: Մասնաւոր դր Հայ ազգային կոնգրեսը «չնչում է նրանց թիկունքին»: Որոշ վերլուծաբաններ, ի դէպ, այս առթիւ նոյնիսկ ափսոսանք են յայտնում, որ Կոնգրեսի ներկայութիւնն այդքան ազդեցիկ է, որովհետեւ, ըստ նրանց, եթէ Հայաստանի ընդդիմադիր դաշտում այդքան կազմակերպուած ուժ չլինէր, կոալիցիայի ներսում «իրար կ'ուռէին»:

Այլ հարց է, որ այդ առումով ներկայիցիոն սրացումները «գրական ազդակներ» են: Նշանակում է՝ համաժողովրդական շարժման պոտենցիալը շարունակում է խուճապ առաջացնել իշխանական համակարգում: Այնքան լուրջ խուճապ, որ Սերժ Սարգսեանն արդէն շանտաժի ու սպառնալիքների միջոցով է փորձում կուռ պահել շարքերը:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
 ԽՄԲԱԳԻՐ՝
 SOPEA. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՏԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՐԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹՅԵԱՆ
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$120.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆ

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԱԶԱԿՑՈՒԹԻՒՆ Է ՀԱՅՑՈՒՄ ԱՐԵՄՈՒՏՔԻՑ

Հոկտեմբեր 17-ին Գիւմրիում լրագրողների հետ են հանդիպել «Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւորներ Ստեփան Սաֆարեանը եւ Զարուհի Փոստանջեանը: Բանախօսները անդրադարձել են երկրում ստեղծուած իրավիճակին եւ ներքաղաքական զարգացումներին: Մասնաւորապէս Ստեփան Սաֆարեանը մեղադրել է իշխանութիւններին եւ ՀԱԿ-ին միահամուռ ուժերով հասարակութեան շրջանում հրասթափութեան մթնոլորտ ձեւաւորելու համար, սակայն համոզմունք է յայտնել, որ իրավիճակը կը փոխուի ընտրութիւնների նախաշեմին.



«Ժառանգութիւն» կուսակցութեան պատգամաւոր Ստեփան Սաֆարեան

«Ես ուզում եմ, ի ուրախութիւն մեր ժողովրդի եւ ի տիրութիւն իրենց, ասել, որ այս անգամ եւս ժողովուրդը, պայքարելով յանուն յաղթանակի, խառնելու է բոլոր խղճաբարտերը: Մի նայէ՛ք աչսորուալ ճահճացած եւ լճացած իրավիճակին, երբ թէ՛ իշխանութիւնը, թէ՛ արտախորհրդարանական ընդդիմութիւնը միասնաբար կարողացել են հասարակութեան լայն զանգուածներին մղել դէպի հրասթափութիւն եւ օտարում, բայց իւրաքանչիւր ընտրութեան շրջանում մենք տեսել ենք՝ ինչպէս է այդ օտարուած եւ հրասթափուած քաղաքացին ոտքի կանգնում»,-նշել է Աժ պատգամաւորը:

Ստեփան Սաֆարեանը նաեւ երկրի առաջ ծառայած խնդիրների

լուծման ուղղութեամբ Սերժ Սարգսեանին մեղադրել է անգործութեան մէջ՝ նշելով, որ ՀՀ նախագահը եւ նրա ղեկավարած կուսակցութիւնը զբաղուած են իրենց իշխանութեան վերարտադրման խնդիրը լուծելով.

«Հանրապետական կուսակցութիւնը՝ ի դէմս իր առաջնորդի, այս վերջին մէկ տարին երկրի խնդիրները լուծելու փոխարէն բացառապէս զբաղուած է իր PR արշաւով եւ Արեւմուտքներում աջակցութիւններ հայցելով: Իսկ թէ ինչով է զբաղուած եղել ՀԱԿ-ը, թոյլ տուէք գնահատականներ ըտալ. հասարակութիւնն ինքն է գնահատում, թէ ինչի հասան եւսմեայ պայքարի աղաւաղման եւ փոշիացման արդիւնքում», -ասել է Ստեփան Սաֆարեանը:

«ՓԱՐԻՉԵԱՆ ՍՈՒՐՃ»-Ի ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ԶԵՐՔՈՒՄ Է ՀԱՅԱՍՏԱՆԵՆ ԻՐ ԶԵՌԱՆԱԼՈՒ ԼՈՒՐԸ

Լուրերը, թէ «Փարիզեան սուրճ» ընկերութեան սեփականատէր, ֆրանսահայ գործարար Վալերի-Աշխէն Գործունեանը վաճառում է ընկերութիւնը եւ հեռանում Հայաստանից, իրականութեանը չեն համապատասխանում:

«Ոչ, ես իմ «Փարիզեան սուրճը» չեմ վաճառել, եւ առայժմ չեմ պատրաստուում», - Tert.am-ի հետ զրոյցում նշեց Վալերի-Աշխէն Գործունեանը՝ վստահեցնելով, որ ինքն օրական 5-6 անգամ լինում է «Փարիզեան սուրճում», եւ շարունակելու է իր բիզնեսը Հայաստանում: Նա նաեւ կտրականապէս հերքեց այն լուրերը, թէ պատրաստուած է հեռանալ Հայաստանից. «Սուտ է»:



«Փարիզեան սուրճ»-ի սեփականատէր Վալերի-Աշխէն Գործունեան

րածուած տեղեկութեան համաձայն՝ Հայաստանի որոշ բարձրաստիճան պաշտօնեաներ ցանկանում են խլել իր բիզնեսը: Մասնաւորապէս, նշում էր ՀՀԿ անդամ Զոհրաբ Զոհրաբեանի անունը:

«Աժ պատգամաւոր Զոհրաբ Զոհրաբեանը ինձ հետ ընդհանրապէս կապ չունի, ոչ իմ կեանքի, ոչ էլ իմ գործի ու ընկերների հետ: Թողէք ինձ հանգիստ», - ասաց նա:

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ-ԾԱՌՈՒԿԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԶԻ ԿԱՅԱՅԵԼ

ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի մամուլի խօսնակ Արման Մուսիսեանն «Ա1+»-ի հետ զրոյցում հերքեց լրատուամիջոցներում հրապարակուած լուրերը՝ Լեւոն Տէր-Պետրոսեանի եւ ԲՀԿ ղեկավար Գագիկ Մառուկեանի հանդիպման մասին: «Նման բան չի եղել», - վստահեցրեց Մուսիսեանը:

Ինչ վերաբերում է Աժ առաջիկայ ընտրութիւններին մասնակցելու հարցի շուրջ մտածելու համար ՀՀԿ-ի կողմից ԲՀԿ-ին մէկ շաբաթ ժամանակ տրամադրելու մասին տեղեկութիւններին, Մուսիսեանը նշեց՝ «Թող յարաբերութիւնները յստակեցնեն, այն ժամանակ էլ կը մեկնաբանեք»:

Ի՞ՆՉՈՒ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐԸ ԱՐԴԻՒՆՔ ԶԻ ՏԱԼԻՍ

Ազգագրագէտ Հրանոյշ Խառատեանը գտնում է, որ կառավարութիւնը վաղուց պէտք է յայտարարէր, որ 2003թ. աղքատութեան յաղթահարմանն ուղղուած իր ծրագիրը ձախողուած է: «Թէ ի՞նչը եկաւ փոխարինելու այդ ծրագրին, ես դժուարանում եմ ասել: Փաստն այն է, որ մենք ունենք ծրագիր, որի կենքեք տեւեց երկու-երեք տարի», - «Ա1+»-ին ասաց Հրանոյշ Խառատեանը: Այս ծրագրում նա աշխատել է սոցիալական բաժնի աշխատանքների պատասխանատուի պաշտօնում:



Ազգագրագէտ Հրանոյշ Խառատեան

Վերջին տարիների վերլուծութիւնները փաստում են, որ յատկապէս գիւղական շրջաններում աղքատութեան ցուցանիշը աճել է: «Մեր վերլուծութիւնները ցոյց են տուել, որ 2000թ. աղքատ ընտանիքները 2007թ-ին իրենց կեանքում որեւէ փոփոխութիւն չեն գրագել»:

Թէեւ կառավարութեան ծրագիրն ունէր «Աղքատութեան յաղթահարման» անուանումը, սակայն տիկին Խառատեանն այս ոլորտում յաղթանակներ չի նկատում, բացի մէկ-երկու ուղղութիւնից. «Ես գտնում եմ, որ այդ ծրագիրը կառավարութեան համար հենց սկզբից էական նշանակութիւն չունեց: Սա ծրագիր էր, որը Համաշխարհային բանկը առաջարկել էր եւ մեր երկիրն էլ համաձայնուել էր, ՀԲ-ի որոշ վարկերի օգտագործումը շարունակելու համար»:

Յաջողութեան գրանցած ոլորտներն ըստ տիկին Խառատեանի՝ առողջապահութեան ծառայութիւնների մատուցումն է, սակայն առաջընթաց չեն գրանցել սոցիալապէս անապահովներին

բուժօժանույթիւն մատուցելու հարցում:

«Կրթութեան ոլորտում մենք շարունակում ենք հետընթաց արձանագրել, թէ արտագաղթի, թէ դասագրքերի, թէ կադրային զագեցուածութեան հարցում: Որքան Երեւանից հեռու են, այնքան կրթութեան մակարդակը ցածր է: Այսպիսին, աղքատութեան յաղթահարման ծրագիրն ունէր առանձին խնդիրներ, որոնց համալիր լուծումը կեանքի որակի փոփոխութեան պէտք է բերեր, որը չիրականացաւ ոչ համամասնօրէն եւ ոչ էլ առանձին ուղղութիւններով», - նշեց տիկին Խառատեանը:

Սակայն նա ուրախ է, որ այդ ծրագիրը գոնէ ուսուցիչների աշխատավարձի խնդիրն է լուծել: «Այլ լուծուած խնդիր՝ առաջադրուած Աղքատութեան յաղթահարման ծրագրում չեմ տեսել եւ կարող եմ ասել, որ այդ ծրագիրն այսօր մեր կեանքից դուրս է», - նշեց Հրանոյշ Խառատեանը:

ՈՐԵՒԷ ՄԵԿԸ ԿՈՍԼԻՑԻՈՆ ՅՈՒՇԱԳՐԻՑ ՀՐԱԺԱՐՈՒԹԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿ ԶԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ

«Որեւէ մէկը կոալիցիոն յուշագրից հրաժարուելու առաջարկ չի ներկայացրել, եթէ լինի առաջարկ, դա կը քննարկուի, քանի որ որեւէ կոալիցիա յաւերժ չէ», - ասաց ՀՀԿ-ական պատգամաւոր Գագիկ Մելիքեանը Հոկտեմբեր 18-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ:

Նա յայտնեց, որ օրերս տեղի ունեցած կուսակցութեան գերագոյն մարմնի նիստում քննարկուել են կուսակցական հարցեր. «մինիմում նպատակով՝ բացարձակ մեծամասնութիւն ունենալ խորհրդարանում, իսկ մաքսիմում գերխնդիրը՝ նախագահական ընտրութիւններում Սերժ Սարգսեանի յաղթանակն է»:

«Ես չեմ տեսել, որ առաջին կամ երկրորդ նախագահները քաղաքական պասիւութիւն դրսեւորեն: Լեւոն Տէր-Պետրոսեանի լուրը դեռ պասիւութիւն չէ, նա այդ քաղաքական պասիւութեամբ հասաւ նրան, որ կամաց-կամաց ակտիւացաւ նրա քաղաքական կերպարը, այնպէս որ լուրերն են էլ քաղաքական կատեգորիա է», - կարծիք յայտնեց Գագիկ Մելիքեանը:

Ըստ նրա, առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնները լինելու են ակտիւացման դրսեւորման հնարաւորութիւն, մէկը՝ հացաղուով, մէկը՝ նստացոյցով, մէկն էլ կ'աւի, որ արդէն ընտրութիւնները կեղծուած են:

ՀՀԿ խորհրդի անդամ Լեւոնիկ Ալեքսանեանը լրագրողների հետ հանդիպմանն ասաց. «Ոչ միայն

կոալիցիայի ներսում, այլեւ դրանից դուրս հանրապետական ակտիւացում է իր գործունէութիւնը: Կայ կոալիցիոն յուշագիր, եւ եթէ կոալիցիայի անդամը հրաժարուած է կոալիցիոն յուշագրից, դա լաւ չի դիտուում, դա ճիշդ չէ, դա վնասում է նրա իմիջին»:

Նրա կարծիքով, «Իհարկէ, քաղաքականութեան մէջ կան անբարոյական էլեմենտներ, բայց քաղաքականութիւնը ունի նաեւ բարոյական օրէնքներ»:

«ՀՀԿ խորհրդի նիստում շատ ներքաղաքական եւ ներկուսակցական հարցեր են քննարկուել, բայց որոշում չի եղել, քննարկումներ ԲՀԿ-ի հետ կապուած չեն եղել, քաղաքականութիւնը նաեւ իրավիճակից է կախուած, սակայն չեմ կարծում, որ նոր յուշագիր կը ստորագրուի», - նշեց Լեւոնիկ Ալեքսանեանը:

«Ես անձամբ ուզում եմ, որ ՀՀԿ-ն յստակեցնի իր յարաբերութիւնները բոլոր քաղաքական ուժերի հետ», - ասաց Ալեքսանեանը:

Անդրադառնալով ՀԱԿ-ի հետ համագործակցութեանը՝ Ալեքսանեանը նշեց. «ՀՀԿ-ն միշտ կողմնակից է եղել բոլոր առողջ ուժերի միաւորմանը, դա ՀՀԿ-ի կենսագրութիւնն է ցոյց տալիս, բայց եթէ դա արուում է այլ քաղաքական ուժի կուսակցական խմբաչին շահերը հետապնդելու նպատակով, ապա դա ՀՀԿ-ն չի ընդունում: ՀՀԿ-ն միշտ էլ հանդիսացել է որպէս կենտրոնամէտ պետականամէտ քաղաքական ուժ»:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ Ե ԶՐԱԴՐՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԵՐՈՊԱՅՈՒՄ ԶԻՆՈՒԱԾ ՈՒԺԵՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎՐԱՅ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Սպառազինությունների վերահսկման, հաշվառման և համապատասխանության հարցերով ԱՄՆ պետքարտուղարի օգնական Ռոբերտ Գոթեմյոյերին:

Հայաստանի նախագահի մամուլի գրասենյակի տարածած հաղորդագրության համաձայն, Սերժ Սարգսյանն ընդգծել է, որ Հայաստանը շարունակում է Եվրոպայում սովորական զինուժ ուժերի (ԵՄՁՈՒ) պայմանագիրը դիտարկել՝ որպես Եվրոպայում անվտանգության և կայունության հիմնասիւններից մեկը և հաշտության և պայմանագրի նպատակներին ուղղված: Նա, միաժամանակ, կարեւորել է Հարավային Կովկասի տարածաշրջանում սպառազինությունների վերահսկման ոլորտում յիշ-

եալ փաստաթղթով սահմանուած պարտավորությունների կատարումը, որի խախտումն արդեն իսկ լուրջ վտանգ է դարձել ամբողջ տարածաշրջանի համար:

Ալեյի վաղ Ռոբերտ Գոթեմյոյերին ընդունել էր Հայաստանի արտգործնախարար Էդուարդ Նալբանդյանը, ով արտգործնախարարության տարածած հաղորդագրության համաձայն, Սպառազինությունների վերահսկման, հաշվառման և համապատասխանության հարցերով ԱՄՆ պետքարտուղարի օգնականի ուշադրությունը հրավերել էր «Ադրբեջանի կողմից տարիներ շարունակ պայմանագրով նախատեսուած պարտավորությունների բացառախախտման և պարբերաբար հնչող ուժի կիրառման սպառնալիքների վրա»:

ՀԱՇՈՒԵՑԻՆ ՆԱԵՒ ՍԵՐՃ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ



Տեր եւ Տիկին Սարգսյաններ կը դիմաւորեն մարդահամարի ղեկավարին

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կարինէ Կոչումջեանն այցելել է Նախագահ Սերժ Սարգսյանի կեցավայր և 2011թ. Հոկտեմբերի 12-ից մեկնարկած մարդահամարի անցկացման շրջանակում իրականացրել Հանրապետության ղեկավարի տնային տնտեսության վերաբերեալ մարդահամարի հարցաթերթիկի լրացում:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆՈՐ ԴԵՍՊԱՆԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ

Շարունակուած էջ 1-էն

ներու ներկայացուցիչներու հետ իր առաջին հանդիպման ընթացքին ձոն Հէֆըրն պատասխանեց նաեւ մի քանի հարցերու: «Ազատութիւն» ռատիոկայանի հարցին՝ «Ինչպէ՞ս կը գնահատէիք դարաբաղեան գործընթացի ներկայ փուլը», նորանշանակ ղեկավարը, վերահաստատելով ԱՄՆ-ի դիրքորոշումը, պատասխանեց, որ այդ խնդրի կարգաւորումը կը տեսնէ միայն խաղաղ բանակցութիւններու շարունակման մէջ, ԵԱՀԿ-ի Մինսկի խումբի ձեւաչափի շրջագծէն ներս:

Պատասխանելով Հայաստանի

ներքաղաքական իրադրութեան առնչուող հարցին, ղեկավարը Հէֆըրն յայտնեց, որ Միացեալ Նահանգներու նախորդ ղեկավարէն՝ Մարի Եովանովիչէն տեղեկացած է, որ վերջին 6 ամիսներու ընթացքին այս առումով երկրէն նաեւ կարեւոր յառաջընթաց արձանագրուած է: Ան յոյս յայտնեց, որ գալիք ընտրութիւններու ընդառաջ՝ դրական գործարկումներ կը շարունակուին:

«Միացեալ Նահանգները պատրաստ է ամէն կերպ աջակցելու այդ ճանապարհին», - հաստատեց Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու նոր ղեկավար ձոն Հէֆըրն:

ԻԼՅԱՄ ԱԼԻԵՒԻ ՀԱՄԱԶԱՅՆ

Շարունակուած էջ 1-էն

Հէյտար Ալիեւը, մենք մէկ թիւ հող անգամ չէինք կորսնցնել»:

Խօսելով Ատրպէյճանի՝ Հայաստանի նկատմամբ ունեցած «առաւելութիւններու» մասին՝ Ալիեւ ըսած է, որ Ատրպէյճանի ռազմական պիւտճէն 500 միլիոն տոլարով կը գերազանցէ Հայաս-

տանի ողջ պիւտճէն:

Ալիեւ անդրադարձած է նաեւ Ատրպէյճանի և Հայաստանի բնակչութեան քանակներուն միջեւ եղած զգալի տարբերութեան և ըսած, որ բոլոր ալը գործօնները իրենց ազդեցութիւնը կը ձգեն ԼՂ հիմնադրի վերջնական կարգաւորման վրայ:

«Ատրպէյճանի բնակչութեան

«ԱՏՐՊԵՅՃԱՆԸ ՓՈՐՁՈՒՄ Ե ԱՐԴԱՐԱՑՆԵԼ ԻՐ ՌԱԶՄԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԱՃԸ»

Ատրպէյճանի կողմից Հայաստանի հասցէին արուած՝ սպառազինութիւնների մրցավազք հրահրելու մասին մեղադրանքների հետ չի կարելի համաձայնել: Այս մասին NEWS.am-ին ասաց Ռազմավարական հետազոտութիւնների ռուսաստանեան ինստիտուտի Սեւօնովեան-Կասպեան կենտրոնի ղեկավար, փորձագէտ Էդուարդ Պոպովը: Նրա խօսքով՝ չաղթական պատերազմի մասին ռազմատենչ յայտարարութիւններ արուած են երկու կողմերից էլ, ընդ որում՝ Ադրբեջանում նման կարծիքներ հնչում են նաեւ պաշտօնատար անձանց կողմից:

«Սակայն առաջին հերթին պաշտօնական Պաքուի յայտարարութիւնների շնորհիւ է յայտնի, որ Ատրպէյճանի ռազմական բիւ-

ջէն գերազանցում է ողջ Հայաստանի բիւջէն: Հուսեցնլի յայտարարութիւնը կարող է նշանակել Ատրպէյճանի աճող ռազմական ծախսերի արդարացում, որն արուած է միջազգային լսարանի համար», - ընդգծեց փորձագէտը՝ աւելացնելով, որ ոչ մի նոր բան չկար Ատրպէյճանի դիւանագէտի յայտարարութեան մէջ:

Ինչպէս աւելի վաղ հաղորդել էր NEWS.am-ը, Ատրպէյճանի ԱԳՆ անվտանգութեան կառավարման երկրորդ քարտուղար Էլչին Հուսեյնլիին Հոկտեմբերի 11-ին յայտարարել էր, որ «Հայաստանն աւելի ինտենսիվ կերպով է սպառազինուած, քան Ատրպէյճանը» և որ «Երեւանը պատրաստուած է ոչ թէ խաղաղութեան, այլ պատերազմի»:

ՄԷԿ ՏԱՐԵԿԱՆ «ՏԱԹԵԵՐ»Ը ՍՊԱՍԱՐԿԱԾ Ե 70.000 ՈՒՂԵՒՈՐ



Աշխարհի մէջ ամենաերկար ուղեւորատար «Տաթեւեր» նոպանուղին

Աշխարհի մէջ ամենաերկար ուղեւորատար յետադարձելի «Տաթեւեր» նոպանուղին մէկ տարեկան է: Ճոպանուղիի «Հալիձոր» կայանի սպասարահին մէջ հրաւիրած ասուլիսի ժամանակ՝ նոպանուղիի տնօրէնը ներկայացուցած է նոպանուղիի մէկամեայ աշխատանքը և իրականացուցած ծրագիրները:

Ճոպանուղին հանրային գործարկումէն՝ 23 Հոկտեմբեր 2010էն մինչեւ օրս սպասարկած է մօտ 70.000 ուղեւոր, որուն աւելի քան 10%ը յարակից գիւղերու բնակիչներ են, որոնք նոպանուղիէն օգտուած են անվճար: Անցեալ տարուան ընթացքին նոպանուղիի նկատմամբ հետաքրքրութիւնը յատկապէս մեծ եղած է տօն և հանգստեան օրերուն, որոնց ժամանակ նոպանուղին սպասարկած է օրական 700-800 ուղեւոր:

Ճոպանուղիի շահագործման ողջ ընթացքին իրականացած է ամենօրեայ մանրակրկիտ ճարտարագիտական սպասարկում անձնակազմի և նոպանուղին կառուցած գույքերից մասնագէտներու կողմէ՝ նոպանուղիի շահագործումը և ճարտարագիտական պայմանները հաստատապէս պահելով սարքին և բացարձակ անվտանգ:

Ողջ տարուան ընթացքին, շահագործման գործընթացին գուգա-

հեռ, իրականացած են նոպանուղիի երկու կայաններու յարակից տարածքներու բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, տեղադրուած են տեղեկատուական և այցելուներու եռալեզու ուղեցուցչավահանակներ, աւելի քան 50 նստարաններ և աղբամաններ՝ տարածքը դարձնելով աւելի յարմարաւէտ այցելուներու և ուղեւորներու համար: Ճոպանուղիի «Տաթեւ» կայանին տեղադրուած և շուտով շահագործման պիտի յանձնուի լուացարաններ:

Ընթացիկ տարին «Տաթեւեր»-ը «Հալիձոր» կայանի յարակից տարածքին կառուցուած և շահագործման համար պատրաստ է սպասարահ - սրճարանը, որ նախատեսուած է ուղեւորներու և և այցելուներու հանգիստի և սպասման յարմարաւէտ կազմակերպման համար:

«Տաթեւեր» նոպանուղին ոչ միայն գբօսաշրջութեան զարգացման լաւ հնարաւորութիւն է, այլ նաեւ ստեղծած է աշխատատեղ յարակից համայնքներու բնակիչներուն համար: Այսօր նոպանուղին և նորաբաց սրճարան-սպասարահը ունին 55 աշխատող, որոնք յարակից համայնքներու և Գորիսի բնակիչներ են:

բանակը գերազանցած է 9,1 միլիոնը, այն պարագային, երբ բացարձակ անտարբերութեան մէջ ապրող Հայաստանի քաղաքացիները ընդմիշտ կը լքեն իրենց երկիրը: Մենք

երբեք չենք համակերպուիլ մեր հողերու բռնագրաւման հետ և կը վերականգնենք մեր տարածքային ամբողջականութիւնը», - ըսած է Ալիեւ:

ՎԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«Ա1+»-Ի ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՄԴՅԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ ՎԱՐԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆԻ ՀԵՏ ՔՈՉԱՐԵԱՆՆ ԱՅԼԵԻՍ ՔԱՆԴԵԼՈՒ ԲԱՆ ՉԻ ԹՈՂԵԼ

ԶՐՈՒՑԵՑ ՏԻԱՆԱ ՄԱՐԿՈՍԵԱՆԸ

«Պարոն Շիրխանեան, ինչպէ՞ս էք գնահատում երկրում ստեղծուած ներքաղաքական իրավիճակն այն բանից յետոյ, երբ ընդդիմութիւնը դադարեցրեց հանրահաւաքները, չնայած որ իշխանութիւնը չընդառաջեց եւ չկատարեց ՀԱԿ-ի առաջ քաշած պահանջները: Ընդդիմութիւնը պարտուեց, իշխանութիւնը յաղթեց, թե՛ եկան կոնսենսուսի:

«Չեմ կարծում, որ կոնսենսուսի եկան, ՀԱԿ-ն ուղղակի հասկացաւ, որ այլ ճանապարհ չկայ. քաղաքական պահանջները, որոնք ներկայացուած էին՝ չբաւարարուեցին իշխանութեան կողմից, դրանց հասնելու ուրիշ քայլեր՝ ՀԱԿ-ը չունէր, դրա համար էլ դադարեցրեց շուրջօրեայ հանրահաւաքները:

«Բայց նաեւ կարծիք կայ, որ նստացոյցի դադարեցման պատճառներից մէկն այն է, որ ակնկալուած թուաքանակով մարդ չմասնակցեց դրանց: Հասարակութեան մօտ դժգոհութիւնն ակնյայտ է, ձեր կարծիքով ինչն է հոծ բազմութիւն չհաւաքուեց» Ազատութեան հրապարակում:

«Որովհետեւ հրապարակում նրանք չլսեցին իրենց խնդիրների լուծման առաջարկներ՝ ՀՀ-ում առկայ խնդիրների լուծումներ, հրապարակում ոչ մի անգամ չառաջարկուեցին: Այն, ինչ առաջարկուած էր, երկիրը ճգնաժամից հանելու ճանապարհ չէր, եւ լսող մարդիկ շատ լաւ հասկանում էին, որ դրանով իրենց խնդիրները չեն կարգաւորուի:

«ՀԱԿ-ը մշակել էր երկիրը ճգնաժամից հանելու մեծածաւալ փաստաթուղթ՝ տարբեր ուղղութիւններով. արդէս՝ այդ ծրագրի ընդունման պարագայում խնդիրները չէին լուծուի:

«Այդ մեծածաւալ փաստաթուղթը շատ քիչ բանով էր տարբերուած մինչեւ այսօր ընդունուած հայեցակարգերից, որոշումներից, հակաճգնաժամային կոնցեպցիաներից: Խնդիրը նրանում է, որ մենք այդպէս էլ չենք ուզում ճշտել, թէ որտեղ է թաքնուած պատճառը ՀՀ-ի ներկայ վիճակի՝ շարունակական արտագաղթի, աղքատութեան, բարոյագրկման:

«Եւ որտե՞ղ է թաքնուած: «Դրա հիմքը դրուել է 20 տարի առաջ, երբ Հայաստանում ներդրուեց լիբերալ համակարգ: «Բայց ՀՀ-ն ունէ՞ր այլընտրանք: «Իհարկէ, ինչպէս եւ ցանկա-



ցած երկիր: Այդ ժամանակ ոչ մի լուրջ հետազօտութիւն, վերլուծութիւն, նախապատրաստական աշխատանք չկատարուեց. ՀՀ-ն ուղղակի ընդունեց արեւմուտքի առաջարկը եւ ներդրեց այս համակարգը, որովհետեւ այդ առաջարկը ուղեկցուած էր վարկեր տալու խոստումներով եւ այլն, եւ այլն:

Իսկ այդ համակարգը, ինչպէս հիմա շատ ու շատ հեղինակաւոր տնտեսագէտներ, վերլուծաբաններ ու քաղաքագէտներ են ասում, դա յատուկ ստեղծուել էր հետխորհրդային հանրապետութիւնների վերջնական քայքայման հասնելու նպատակով, դա ասում են ամերիկացին, եւրոպական մասնագէտները: Ու մենք ընկանք թակարդը եւ մինչ օրս շարունակում ենք մնալ դրա մէջ: Մինչեւ մենք չհրաժարուենք եւ Հայաստանում չունենանք մեր ազգային, սոցիալական խնդիրները բխող համակարգ եւ օրէնսդրական դաշտ՝ իր Սահմանադրութեամբ, այսինքն՝ նոր Սահմանադրութիւն, ոչ մի բանի չենք հասնի: Այսօր կառավարութիւնը կառավարութիւն է, բայց գործող օրէնքներով կառավարելու նարաւորութիւնն առկայ է, նախարարութիւնները եւ ոչ մէկը չունի, կառավարելու իրաւունքից զուրկ է. կրթութեան նախարարը ոչ դպրոց ունի, ոչ ուսուցիչ, ոչ աշակերտ, նա կարող է միայն քաղաքականութիւն մշակել: Իսկ ով է պատասխանատու կրթութեան մակարդակի համար: Նոյն վիճակն է միւս նախարարութիւններում:

Մինչեւ մենք իշխանութեանը չլիազօրենք իշխանութիւն իրականացնելու, կառավարելու ֆունկցիաներով, պարտականութիւններով, պատասխանատուութեամբ, մենք չենք հասկանայ, թէ ինչու է Հայաստանում օր օրի կրճատոււմ

վարելահողը, այդինքն, ինչու է ՀՀ-ն դատարկոււմ, ինչու են ամառայնում սահմանամերձ գոտիները: «Այսինքն՝ եթէ մենք այսօրուայ իշխանութեանը լիազօրենք նոր իրաւասութիւններով, նոր Սահմանադրութեամբ, նա կարող է իրավիճակը փոխել եւ հակառակը, եթէ ընդդիմութիւնը զայ իշխանութեան եւ ղեկավարի նոյն օրէնքներով առանց համակարգի փոփոխութեան, ոչինչ չի փոխուի:

«Մարդիկ են աշխատեցնում համակարգը, ոչ թէ համակարգը մարդկանց. այսօրուայ նախագահը Լեւոն Տէր-Պետրոսեանի թիմի անդամ է եղել, այսօրուայ վարչապետը Տէր-Պետրոսեանի թիմի անդամ է եղել, շատ-շատերը եղել են այն թիմում, երբ ՀՀ-ն ստեղծուեց, համակարգը ներդրուեց: Հիմա փոխեցինք մարդուն, համակարգը նոյնը թողնելով, ի՞նչն է փոխուելու: Համակարգը ստիպում է մարդուն աշխատել ըստ ընդունուած օրէնքների, եւ նա ինչքանով կարողանում է՝ աշխատում է այդ օրէնքների սահմաններում:

«Իսկ ռեալ՝ էք համարում համակարգի փոփոխութիւնը:

«Ինչո՞ւ ոչ: «Ինչ միջոցով՝ սահմանադրական հանրաքուէի՞:

«Բացարձակ, մտածող մարդկանցով, այդ թւում՝ իշխանութեան մէջ գտնուող մտածող մարդկանցով. 20 տարի է անցել. պէտք է նստել ու ամփոփել մեր ունեցած արդիւնքները՝ լաւ, վատ, եթէ կան բացթողումներ, սխալներ՝ պարզել դրանց պատճառները:

Իսկ դա աւելի լաւ, քան գործող իշխանութիւնը, ոչ ոք չի անի, որովհետեւ ընդդիմութիւնը մինչեւ հասնի իշխանութեան, այդ բացասական երեւոյթներն աւելի են խորանալու: Հիմա որպէսզի դա կանգնեցուի, աւելի ճիշտ է, որ իշխանութիւնն ինքը ամփոփի եւ ասի, ոչ, այս ուղին մեզ բերել է նման հետեւանքների՝ արտագաղթ, աղքատութիւն, ամայացում, հիմա պէտք է ընտրել այն ուղին, որը դուրս կը հանի դրանք:

«Բայց չէ որ այդ իշխանութեան մէջ գտնուողները տիրապետում են հսկայական միջոցների, ունեն սեփականութիւն եւ ազատական համակարգի փոփոխութիւնը նրանց եւս ձեռնտու չի լինի: Որովհետեւ որքան ես եմ հասկանում, ձեր առաջարկած համակարգի փոփոխութիւնը ենթադրում է նաեւ սեփականութեան վերա-

բաշխում:

«Ես չեմ ասում, որ պէտք է գնալ յեղափոխութեան ճանապարհով. ամէն ինչը վերցնել ձեռքներից, բոլորին տանել, լցնել բանտերը, քաւ լիցի, մենք մի անգամ արել ենք, եւ կրակն ենք ընկել մինչեւ այսօր: Սեփականութեան բոլոր ձեւերը պէտք է գոյութիւն ունենան, սոցիալ-դեմոկրատական համակարգը բոլորովին չի բացառում մասնաւոր սեփականութիւնը, հակառակը՝ լեգիտիմացնում եւ օրինականացնում է: Ուղղակի մասնաւոր սեփականատէրը այդ համակարգում հարկեր չմուծել չի կարող, այսինքն՝ այս չափերի ստուերային տնտեսութիւնն այն համակարգում լինել չի կարող: Պետութիւնը անպատասխանատու լինել մարդուն աշխատանքով ապահովելու հարցում չի կարող, պետութիւնը պէտք է իր վրա վերցնի մարդուն աշխատանքով ապահովելու հարցը, կրթական մակարդակը, առողջապահութիւնը. այդ համակարգը առաջին հերթին դա է բերում իր հետ, այսօր պետութիւնը պատասխանատու չի դրանցից եւ ոչ մեկի համար: Եւ դա անձից չի կախուած, այլ համակարգն է թելադրում այդպիսի կանոններ, իսկ ինչո՞ւ պէտք է այսօրուայ իշխանաւորները շահագրգռուած չլինեն, որ պետութիւնը (չո մենակ իրենք չեն պետութիւնը, ժողովուրդն էլ է չէ՛, պետութիւն), պատասխանատուութիւն կրի կոնկրետ քաղաքացու առաջ, նրան աշխատանքով, կրթութիւնով, առողջութիւնով, իրաւունքներով, ազատութիւններով ապահովելու համար, ոչ թէ նպաստելու, ինչպէս Սահմանադրութիւնում է սաւուած:

«Կարծես ամբողջ աշխարհում է նկատուում ձախ սոցիալիստական ուժերի ակտիւացում, առաջխաղացում, եւ հակառակը, աջ ուժերի հեղինակութեան, կամ մասսայականութեան անկում՝ սկսած ԱՄՆ-ից ու Եւրոպայից, վերջացած հետխորհրդային երկրներով:

«Ժողովուրդը միշտ յոգնում է իշխանութիւններից, մենք խորհրդային տարիներին հոգնել էինք խորհրդային իշխանութիւնից, մտածում էինք՝ կաշառակերութիւնը շատ է, անարդարութիւնը շատ է, եւ երբ հնարաւոր եղաւ իշխանութիւններից ազատուել, բոլորս

Շարք էջ 18

Advertisement for A.A. Insurance Services featuring Bedros S. Maronian and Siamanto B. Maronian. Includes contact information for three Los Angeles locations and a list of insurance services. A cartoon illustration of a man in a suit is also present.

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ՅՈՒՇ-ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ (Մահուան 40-ամեակին առթիւ)

Հայ ժողովուրդի մեծատաղանդ բանաստեղծ Պարոյր Սեւակի մահուան 40-ամեակն այս տարի նշուեցաւ ինքնատիպ միջոցառումներով թէ՛ Մայր Հայրենիքի եւ թէ՛ Սփիւռքի մէջ: Տեղւոյ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնն ալ անմասն չի մնաց այդ հանդիսութիւններէն եւ յուշ-երեկոյով մը պանծացուց լիշատակը անմահ բանաստեղծին:

Արդարեւ, Հինգշաբթի Հոկտեմբեր 13, 2011 բազմահարիւր գրասէրներ, փութացած էին Կլենտէյլի Հանրային գրադարանի սրահը, միասնաբար ոգեկոչելու Պարոյր Սեւակին լիշատակը, կազմակերպուած Նոր Սերունդ Մշակութային Միութեան կողմէ:



Օրուան հանդիսավար ՆՄՄՄ-ի ատենապետ Յարութ Տէր Դաւիթեան իր բացման խօսքին մէջ շեշտեց Պարոյր Սեւակի մեծութիւնը եւ նշեց որ ամէն անձ որ կ'ուզէ իր կեանքն արժեւորել այս աշխարհի վրայ կը փնտռէ տիպարներ, որոնք կրնան օգտակար ըլլալ իր կեանքի արժեւորման գործընթացի մէջ: Այդպիսիներէն էր Պարոյր Սեւակ:

Ներկաները ձայներիցի վրայ ունկնդրեցին երջանկայիշատակ վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի յարգանքի խօսքը Պարոյր Սեւակի մասին, ուր գինք կը բնութագրէ որպէս մեր ժողովուրդի «մեծ»երէն մին: Այնուհետեւ մտիկ ըրինք Պարոյր Սեւակի կողմէ անձամբ արտասանուած իր «Վարք Մեծաց»ը, որ կարծէք ձեռով մը իր կենսագրականը եղած ըլլար:

Պարոյր Սեւակին իր անձնական յուշերով հանդէս եկաւ ծանօթ մանկավարժ Դոկտ. Մինաս Գոճայեան, երբ ինք 23-24 տարեկանին, Երեւան կ'ուսանէր եւ առիթն ունեցած էր հանդիպելու մեծ բանաստեղծին:

Օրուան գլխաւոր բանախօսն էր ծանօթ մտաւորականուհի Անահիտ Սուքիասեան: Ան Պարոյր Սեւակի ստեղծագործութիւնները բաժնեց երեք ժամանակաշրջաններու: Առաջինը մինչեւ 1951 թուականը: Երկրորդը Մոսկովեան տարիներ, ուր դէմ յանդիման գտնուեցաւ նոր միջավայրի, ինքնահաստատման եւ սեփական գեղագիտական ոճի զարգացման դիմաց: Այստեղ թարգմանական աշխատանքի առընթեր սկսաւ գրական-ստեղծագործական նոր շրջան



մը: Հայրենիք վերադարձին՝ իրար ետեւէ սկսաւ գրել «Անհաշտ մտերմութիւն», «Սիրոյ ճանապարհը», «Նորից քեզ հետ»: Իսկ իր գլուխ գործոցներէն՝ «Անլուելի Զանգակատուն»ը արժանացած է պետական մրցանակի: Առանձին նշանակութիւն ունին նաեւ Պ. Սեւակի միւս «Այր մի Մաշտոց անուն» եւ «Եռաձայն Պատարագ» պոէմները, որոնք կը յատկանշուին իրենց հայրենասիրական շունչով: Գալով «Մարդը ափի մէջ» ժողովածուին այստեղ յատկօրէն կը բացայայտուի ժամանակից մարդու ներաշխարհի գաղտնիքներու հետախուզման կիրքը:

Յարգելի բանախօսուհին իր համապարփակ գեկոյցի ընթացքին դիպուկ մէջբերումներ կատարեց Պարոյր Սեւակի ստեղծագործութիւններէն, որոնք արգասիքն էին բանաստեղծի հարուստ ներաշխարհին:

Յայտագրի մէջ Պարոյր Սեւակի կատարմամբ ձայներիցի մի-



ջոցով ունկնդրեցինք իր քերթուածներէն քանի մը հատ:

Օրուան հաճելի նորութիւնն էր ինքնուս, երաժիշտ-երգահան եւ կիթառիստ Ժիրայր Պարսամեանի ելոյթը: Ինք յօրինած ըլլալով Պարոյր Սեւակի ստեղծագործութիւններէն քանի մը հատը, («Արգելանոց» եւ «Երագում») գանոնք անձնապէս ներկաներուն հրամցուց նուագելով եւ միաժամանակ երգելով, արժանանալով ջերմ ծափահարութեանց: Պարոյր Սեւակի անուան գրական մշակութային ակումբի հիմնադիր նախագահ Յասմիկ Խաչատուրեան իր ելոյթով արժեւորեց մեծ բանաստեղծի ստեղծագործութիւնները: Իսկ շնորհալի երգչուհի Լենա Մանուկեան մեկնաբանեց Պ. Սեւակի «Բիչ ենք, բայց հայ ենք» երգը:


Սոյն լիշարժան երեկոն վերջ գտաւ Պ. Սեւակի «Սարդարապատ»ով, զոր երգեցին ներկաները միաբերան եւ յոտնկայս:

ԷԼ Ո՞Վ Կ'ԵՐԳԻ...
ՊԱՐՈՅՐ ՍԵՒԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆԵՐՍԷՍ Պ. ՍԵՍՐՈՊԵԱՆ

<p>Էլ ով կ'երգի - Փլած տներ, Խախտած սներ, Ա՛խ բնաւեր, Դու սեւորակ, Պարոյր Սեւակ... Նարեկացու նման արդէն Անմահացել, Կենդանացել Յաւտ անմահ ես մնացել... Դու մի հրաշք, հրաշք դարունմ, Ճաճանցող լոյս, մութ խաւարում, Հողից ծնած, հողի գրկում Ընդմիշտ ննջած, Դու անսպառ տաղանդ ու փառք, Ծով փառքի մէջ ծով պարզութիւն, Համեստութիւն... Այդ ի՞նչ խաղ էր, Լո՞ւրջ, թէ կատակ, Ինչքան ցաւ կայ Իմ կրծքի տակ...</p>	<p>Դու մեր բառի խօսուն Երգի, Մեր բարբառի, պայծառ մտքի Զ'վերջացող շտեմարան, Հայ գիւղացու բերքի մառան, Երկինք անհաս, Անծիր Պառնաս, Դու մեր խօսքի Մեծ Կոմիտաս... Անլուելի զանգակներդ Յաւերժօրէն կը դողանցեն, Քեզ կը կանչեն, Արարչի դէմ կ'ըմբոստանան, Կը բողոքեն Ղօղանցներն անմահութեան... Դէպքը շանթող՝ Քո խօսքի պէս, Սրտեր վառող՝ Քո երգի պէս, Էլ ո՞վ կ'երգի - Փլած տներ, Խախտած սներ, Ա՛խ բնաւեր, Դու սեւորակ, Պարոյր Սեւակ...</p>
--	---

Mexican Night



Gaidz/Homenmen Mexican Night!

Saturday, October 22 at 8:00pm

**1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104**

Admission is \$15

ArmenienInfo.net

News. Informationen. Kommentare.

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՅԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆՈՐԱՆՏԻՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԻՔԱՅԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԱՏԵԱՆԻ ԳԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Հիւսիսային Ամերիկայի Հայ Կաթողիկէ համայնքը ցնծութեամբ կատարեց իր նոր Առաջնորդին՝ Արհիպատիւ Միքայէլ Եպս. Մուրատեանի կանոնական Գահակալութեան գոյգ հանդիսութիւնները, Կիրակի 2 Հոկտեմբեր, 2011ին:

Կէսօրէ ետք ժամը 2ին, մատուցուեցաւ Հայրապետական սուրբ Պատարագը, Պրուքլինի Լատինաց Սէնթ ձէյմս աթոռանիստ եկեղեցւոյ մէջ, հանդիսապետութեամբ պաշտօնաւարտ Առաջնորդ՝ Արհի. Մանուէլ Եպս. Պաթազեանի եւ մասնակցութեամբ Արհի. Յովհաննէս Եպս. Թէյրոզեանի, օգնական Եպիսկոպոս Լիբանանի Հ. Կ. Թեմին, որ կը ներկայացնէր Գերերջանիկ Տ. Ներսէս-Պետրոս ԺԹ. Տանն Կիլիկիոյ Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս-Պատրիարքը, եւ Արհի. Ռաֆայէլ Արք. Մինասեանի՝ Առաջնորդ Հայաստանի, Վրաստանի եւ Արեւելեան Եւրոպայի:

Ներկայ էին Պրուքլինի Առաջնորդը Արհի. Նիքոլա Տիմարցիօ Եպիսկոպոսը, Գերշ. Օշական Արք. Չօլոյեան՝ Առաջնորդ Ամերիկայի Հայ Առաքելական Արեւելեան Թեմին, Գերշ. Եղիշէ Արք. Գիզիրեան՝ վաստակաւոր Առաջնորդ Անգլիոյ, որ կը ներկայացնէր Գերշ. Խաժակ Արք. Պարսամեանը, Միացեալ Նահանգներու Արեւելքցի Կաթողիկէ Եպիսկոպոսներու Համագումարի նախագահ՝ ձոն Եպս. Քուարիք, Մարոնի Առաջնորդ՝ Կրէկորի Եպս. Մանսուր, Ռեքրանացի Առաջնորդներ՝ Պասիլ Եպս. Լոստրն եւ Ռելիւիամ Եպս. Սքուրլա, Պապական Գեասպանատան խորհրդատու՝ Գերպօ. Անճէլօ Աքքադինօ:

Գահակալութեան արարողութիւնը կը սկսէր Պատարագի «Զի ողորմած» աղօթքէն ետք, մինչ պատարագիչ եւ առընթերակայ Եպիսկոպոսները կը կատարէին փոխնի փոխ ծիսական աղօթքները: Պապական նուիրակութեան ներկայացուցիչը կը կատարէ ընթերցումը քահանայապետական Կոնդակին որով Հ. Կ. Սիւնհոգոսին կողմէ կատարուած ընտրութիւնը Միքայէլ Եպս. Մուրատեանի կը հաստատուէր Սրբ. Պապին կողմէ, որմէ ետք Մանուէլ Եպս. Պաթազեան կը



յանձնէր նոր Առաջնորդին՝ Ս. Գիրքը՝ խորհրդանիշ անոր ուսուցանելու պաշտօնին եւ Եպիսկոպոսական գաւազանը՝ խորհրդանիշ անոր հովուական իշխանութեան, միանգամայն առաջնորդելով գայն դէպի Եպիսկոպոսական գահը: Մինչ հաւատացեալները ծափահարութեամբ կ'ողջունէին նոր Առաջնորդին պաշտօնի ստանձնումը, երգչախումբը կը թնդացնէր մայր տաճարը «Is Pola Eti, Despota»՝ մաղթերգով: Ի վերջոյ Մանուէլ Եպս. Պաթազեան կու տար իր պատգամը, ուղղուած նոր Առաջնորդին, մատնանշելով անոր նուիրական պաշտօնը հովուելու, ուսուցանելու եւ սրբութեան առաջնորդելու իր հոգեւոր հօտը:

Պատարագի աւարտին, Պրուքլինի Առաջնորդը, Արհի. Նիքոլա Տի Մարցիօ Եպիսկոպոսը իր կարգին իր մաղթողական պատգամը կ'ուղղէր նոր Առաջնորդին, նաեւ իր գնահատանքը յայտնելով վաստակաւոր Առաջնորդին՝ Արհի. Մանուէլ Եպս. Պաթազեանին:

Կը յաջորդէր հիւրասիրութիւնն ու շնորհաւորութիւններու պահը եկեղեցւոյ հիւրասրահին մէջ, որու ընթացքին իր երեւումը կը կատարէ Նիւ Եորքի Առաջնորդը՝ Արհ. Թոմոթի Արք. Տոլան, ողջունելով նոր Առաջնորդը:

Հոգեւոր արարողութիւնը կը

պսակուէր երեկոյեան՝ պաշտօնական ճաշկերոյթով, Քուինզի Terrace on the Park ճաշարահին մէջ, ի ներկայութեան վերոյիշեալ անձնաւորութիւններուն: Յայտագիրը կը ներկայացնէր օրուայ հանդիսավարը՝ Օր. Քրիստինա Նասրի, հրաւիրելով նախ Արհի. ձոն Արք. Քուարիքը որ սեղանի օրհնութիւնը կատարէր: Արհի. Յովհաննէս Եպս. Թէյրոզեան կը բերէր ողջոյնն ու բարեմաղթութիւնները Գերերշ. Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքին եւ համայն Հայ Կաթողիկէ Եպիսկոպոսներու Սիւնհոգոսին: Գերշ. Գէորգ Մ. Վ. Չապարեան, յանուն Հայ Կաթողիկէ կղերին, կը բացայայտէր ամբողջ կղերական դասուն տրամադրելիութիւնը նոր Առաջնորդին հետ լիովն գործակցելու համայնքիս ծառայութիւնը ամբողջական ու արդիւնաւէտ դարձնելու առաջադրութեամբ: Ապա կը յաջորդէր Պր. Արա Արոյեան, որ կը շեշտէր թէ համայնքին աշխարհական դասը խանդավառութեամբ եւ լի յոյսերով կը դիմաւորէ իր նոր Առաջնորդը, բաղձալով որ միացեալ ջանքերը նորանոր նուաճումներու դուռ բանան:

Հաճելի պահ մը կը հրամցուէր ներկաներուն՝ երաժշտական հակիրճ բաց ընտիր յայտագրով մը: Գարուլայն Մարրա յաջորդաբար

կը ներկայացնէր «Ո՛վ Հայոց աշխարհ», «Caro Mio Ben», եւ «Երեւան-էրեւան» երգերը, ընկերակցութեամբ իր կողակցին՝ Ուիլիամ Մարրայի: Նշենք որ այս տիպար գոյգը, թէպէտ ծագումով ոչ հայ, հաւատարմօրէն կը ծառայէն ամբողջ տարուայ ընթացքին, Սրբ. Աննայի ժողովրդապետութեան, անսակարկ եւ օրինակելի նուիրումով:

Արհի. Յրանք Գաճիանօ, Ընդհանուր փոխանորդ Պրուքլինի Թեմին, կը յայտնէր թէ իրենք որքան ուրախ ու հպարտ կը զգան որ Արեւելեան Կաթողիկէ թեմ մը հաստատուած է իրենց սահմաններուն մէջ, բաղձալով որ համագործակցութիւնն ու եղբայրական ոգին որ յատկանշած էր յարաբերութիւնները նախկին Առաջնորդին հետ, շարունակուին եւ առաւել սերտանան նորին հետ:

Վաստակաւոր Առաջնորդը՝ Արհի. Մանուէլ Եպս. Պաթազեան, որ մեծաւորը եղած էր նոր Առաջնորդին Ձմեռու դարեկանքին մէջ, նշեց նոր բարեմասնութիւնները, անոր երիտասարդ տարիքին առաւելութիւններու նախաձեռնութեան ոգին, եւ յորդորեց ներկաները որ իրենց բոլոր միջոցներով աջակցին անոր հետ, համայնքին հոգեւոր ու մարդկային կարողութիւններ բազմապատկելու համար:

Նոր Առաջնորդը, Արհի. Միքայէլ Եպս. Մուրատեան իր գոհունակութիւնը յայտնեց բոլորին կողմէ ցուցաբերուած բարի կամքի արտայայտութիւններուն համար եւ յայտարարեց թէ ոչ մի ջանք պիտի խնայէ համայնքին բոլոր ուժերը մէկտեղելու, խիզախ քայլեր առնելու եւ նոր թափ տալու այլեւազլ մարզերու մէջ զոյուութիւն ունեցող գործունէութիւններու:

Հուսկ, փակման գոհաբանական խօսքն ու աղօթքը ընելու հրաւիրուեցաւ Գերշ. Տ. Օշական Արք. Չօլոյեան, որ իր գուարթաբան ու ոգեւորիչ ոճով անդրադարձաւ իր եղբայրական սերտ յարաբերութիւններուն մասին Արհի. Պաթազեանին հետ եւ վաստակեցուց

Շաբ.ը էջ 19

“Mr. Satamian has proved one of the most gifted and brilliant students of the theatre it has ever been my experience and pleasure to direct.”

Nat Brenner
Principal
The Bristol Old Vic
Theatre School
Bristol, England

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային Յանձնաժողովը
կը ներկայացնէ՝

ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆԻ

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՈՍԿԵԱՅ ՅՈՒՐԵԼԵԱՆԸ

Մասնակցութեամբ՝
Ասատուր Կիւզլեանի
Սարգիս Մինասեանի

Գեղարուեստական Յայտագիր

Կիրակի, Հոկտեմբեր 30, 2011, Կ.Ե. 6:30
Փասատինայի ՀԲԸՄԻ Կեդրոն

Մուտքը Ազատ / Գիրասիրութիւն

ՓԱՌԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ԿԱՏԱՐՈՒԵՑ ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ԻՐԱՆԱՀԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Շաբաթ, Հոկտեմբերի 8ին, երեկոյան ժամի 7ին, կատարուեց Իրանահայ Միութեան նոր կենտրոնի պաշտօնական բացումը, որին մասնակցում էին պետական-պաշտօնական հիւրեր, բարձրաստիճան կրօնականներ, մամուլի եւ հեռուստածրագրերի ներկայացուցիչներ եւ հարիւրաւոր հիւրեր եւ միութեանականներ:

Հանդիսութեան սկզբում հանրածանօթ երգչուհի Անահիտ Ներսիսեանը կատարեց Մ. Նահնապետի եւ Հայաստանի օրհներգները: Օրուայ հաղորդավարներն էին Ալինէ Մաքսուտեանը եւ Գէորգի Զարեանը, որոնք իրենց պարտականութիւնը մինչեւ վերջ կատարեցին արժանի կերպով: Ողջունի եւ շնորհաւորանքի ջերմ խօսքերով բեմ ելան Կելնտէյլի Փրեսպիթերեան եկեղեցու հովիւ Քրիստոս Գրիգոր Յովհաննիսեանը, Շերիֆ Լիպաբան, Ֆրանք Քինթերոն: Միութեան նախագահ Նժդէհ Փիրիջանեանը, համառօտ կերպով անդրադարձաւ Միութեան կէս դարեայ պատմութեանը: Այնուհետ բեմ ելաւ Խնամակալի նախագահ դր. Վահան Գրէգորին եւ չիչեց այն բոլոր անձանց, որոնք նիւթապէս եւ բարոյապէս օժանդակել էին միութեան նոր շէնքի կառուցման աշխատանքներին: Յուցարողութեան ղրուագներ միութեան նախկին եւ ներկայ կենտրոններից, որոնք քաղցր չիչողութիւններ արթնացրին ներկաների մէջ: Գեղարուեստական բաժնում երգերով եւ նուագներով էլլիթ ունեցան Սեւանայ Յովսէփեան-Սարմախին, Արմինէ Ղազարեանը, Արմին Մանգասրեանը, սարգիս Քուրքչեանը, Սուսաննա Քիւրքչեանը եւ Գարիկ Թերզեանը եւ արժանացան բուռն գնահատանքի:

Ապա բեմ ելան Տէր եւ Տիկ. Դր. Վահան եւ Ատրինէ Գրէգորիները եւ խնամակալութեան անդամ Թոմիկ Ալեքսանեանը, Միութեան նախագահ Նժդէհ Փիրիջանեանը,

փոխ-նախագահ Օշին Թովմասեանը: Գնահատական խօսքերից յետոյ մեծարուեցին եւ յուշանուէր յանձնուեցին երկար տարիների միութեանական եւ այժմ միութեան Հասցաստանի ներկայացուցիչ տիկին Ժանէթ Մատուրեանը, շինարարական յանձնախմբի ժրջան անդամ Վրէժ Գրիգորեանը եւ տիկին Ատրինէ Գրէգորին: Ապա Թոմիկ Ալեքսանեանը գնահատեց այն բոլոր անձանց որոնք օժանդակել էին նոր կեդրոնի կառուցման գործին: Մասնաւորաբար նշեց Գրէգորի ընտանիքի նուէրը, ի չիչատակ իրենց սիրելի հօր Գալուստ Բաբախանեանի (դայի), որի անուամբ պիտի կոչուի միութեան գրադարանը:

Բացման հանդիսութեան համար պատրաստուած էր ճաշակաւոր մի գրքոյկ որտեղ գետեղուած էր օրուայ ծրագիրը եւ նուիրատուների անունները:


Իրենց բացառիկ ծառայութիւնների, եւ Լոս Անճելըսի Իրանահայ Միութեան մէջ ցուցաբերած արդիւնալից աշխատանքների, վերջապէս Միութեան նոր կեդրոնի կառուցումը իրենց աւարտին հասցնելու համար, թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Յովնան Արք. Տրէտէրեանի խնդրանքով Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետը Միութեան խնամակալ մարմնի նախագահ Դր. Վահան Գրէգորիին եւ նոյն մարմնի անդամ Թոմիկ Ալեքսանեանին պարգեւատրեց Ս. Ներսէս Շնորհալիի անուան շքանշանով: Ներկաները յոտընկալս ունկնդրեցին Վեհափառ Հայրապետի կոնդակները: Սրբազան հօր բարեմաղթանքներով, օրհնութիւններով եւ աղօթքով, աւարտուեց հանդիսութիւնը, կէս գիշերից անց: Ընթրիքի սպասարկումը, սրահի զարդարանքը եւ սեղանների դասաւորումը շատ յաջող էր եւ ճաշակաւոր:

ՆԵՐՍԷՍ ՊԱԼԱՅԵԱՆ-ՄԵՍՐՈՊԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՍ ԵՒ ԱՆԻ ԳՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ ԵՒ ՃԱՄԲՈՐՊՈՒԹԵԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՈՒՄ

Հայ Կրթական Հիմնարկութիւնը, Արարատ-Էսքիճեան Թանգարանը, եւ Հայկական Ուսումնասիրութիւնների եւ Հետազոտութիւնների Ազգային Միութիւնը հովանաւորելու են Հայկական Կարս եւ Անի գրքի ներկայացումը եւ պատկերներով բացատրութիւնը Ուրբաթ, Նոյեմբեր 4, երեկոյան ժամը 7:00-ին Կլենտէյլի Հանրային Գրադարանում, 222 East Harvard Street (երկրորդ յարկ), Glendale, CA 91205:

Երեկոյի առաջին մասում, Յակոբ Կիւլլիւճեան՝ Հայոց Լեզուի եւ Գրականութեան Լոս Անճելէսի Գալիֆորնիայի Համալսարանի Դասախօս, ներկայացնելու է վերջերս հրատարակուած Հայկական Կարս եւ Անի գիրքը, որը խմբագրել է Ռիչարդ Գ. Յովհաննէսեանը՝ Լոս Անճելըսի Գալիֆորնիայի Համալսարանի Հայկական եւ Մերձաւոր Արեւելքի Պատմութեան Պրոֆեսոր: Հայկական Կարս եւ Անի գիրքը UCLA-ի «Հայկական Պատմական Քաղաքներ եւ Գաւառներ» համագումարների շարանի աշխատութիւնների տասերորդ հատորն է: Այս հատորը ներկայացնում է շեղում նախքին հատորներից որոնք կենտրոնացած էին պատմական Արեւմտեան Հայաստանի շրջանների վրայ, մինչդեռ Կարս եւ Անին մեծապէս մաս էին կազմում Արեւելեան կամ Ռուսական Հայաստանի: Հայկական Կարս եւ Անի հատորը մատչելի է լինելու գնման համար եւ հեղինակը անձամբ ստորագրելու է զանաւ: Ռիչարդ Յովհաննէսեանը կը ցուցադրի նկարները երբ 2011-ի



զարնանը ճամբորդեց Պատմական Հայաստանի միջով որպէս NAASR Armenian Heritage զբօսաշրջութեան պատմաբան-առաջնորդ, Արմին Արոյեանի ղեկավարութեամբ, որը իրեն հնարաւորութիւն տուեց այցելելու եւ անդրադառնալու այն քաղաքներին եւ շրջաններին որոնց մասին նա որպէս գիտնական այդքան գրել ու խօսել էր:

Յովհաննէսեանը հեղինակն է Հայաստանը Անկախութեան Ճամբին, Հորս-հատորանոց Հայաստանի Հանրապետութիւն շարքին, եւ խմբագրել է աւելի քան քսան գրքեր որոնցից է Հայկական Յեղասպանութիւնը Հեռահայեաց Ակնարկով «The Armenian Genocide

Մար.ք էջ 19

ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐՈՒԱՆԴ ՔԱՍՈՒՆԻԻ

Թէքէեան Մշակութային Միութեան Փաստօրինակ-Կլենտէյլ Մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպած է դասախօսական երեկոյ մը որ տեղի պիտի ունենայ Հինգշաբթի, 27 Հոկտեմբեր 2011ի երեկոյան ժամը 7:30ին, ԹՄ Միութեան Ալթատիւնայի Պէշկէօթիւրեան Կեդրոնի սրահին մէջ:

Դասախօսութեան նիւթը պիտի ըլլայ հեռակայ ակնարկ մը՝ պիւրքահայ յայտնի մտաւորական Դոկտ. Փրոֆ. Երուանդ Քատուհի կեանքին եւ գրական բեղուն գործունէութեան վրայ: Ան երկար տարիներէ ի վեր կը ծառայէ որպէս հայ լեզուի եւ գրականութեան դասախօս՝ Պէշկէօթի Հայկական Համալսարանին մէջ:

Քատուհիի վերջին հրատարակութիւններէն կարելի է չիչել «Անհաճոյ Ըլլալու Հրճուանքը» եւ «Կիրականօրեայ Մտորումներ», իսկ իր խմբագրած հատորներէն յատկանշական են Հրանդ Կիւզէլեանի

եւ Մորուս Հասրաթեանի Յուշերը: Հրանդ Կիւզէլեան Պոլսահայ քարոզիչ եւ կրթական մշակ մըն է որ վերջերս մահացաւ Ֆրանսայի մէջ, իսկ Մորուս Հասրաթեան հանրածանօթ հայրենի մտաւորական մըն է որ հիւր դասախօս էր Պէշկէօթի Հայկական Գոյէճին մէջ:

Այս խիստ շահեկան նիւթը պիտի ներկայացնէ գաղութիս ծանօթ մտաւորական եւ անձնուէր ազգային, եկեղեցական ու կրթական հասարակական գործիչ՝ Զաւէն Խանճեանը: Պրն. Խանճեան հեղինակ է երկու գիրքերու՝ «Այս Տունը Քո՞ւկդ է Թէ իմս», հրատարակուած 2007 թուականին եւ «Սրտի եւ Մտքի Յոլքեր», հրատարակուած 2011 թուականին: Անոր կարծիքները յաճախ արտաստուած են Լոս Անճելըսի հայ մամուլի սիւնակներուն մէջ:

Մուտքը ազատ է եւ դասախօսութեան աւարտին տեղի պիտի ունենայ պատշաճ հիւրասիրութիւն:

Arabic Night
Սրբապետական Երեկոյ
Կազմակերպութեամբ
ԿԼԵՆՏԵԼԻ
ՍԳՂԿ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱՃԻԻՂԻՆ
ՇԱԲԱԹ, ՆՈՅՆԵՄԲԵՐ 5, 2011
երեկոյան ժամը 8:00-էն սկսեալ
Հ.Մ.Մ.-ի «Կարօ Սողանալեան» սրահին մէջ
1060 N. Allen Ave., Pasadena
ՀԱՄԵԼԻ ԱՆԱԿՆԿԱԼՆԵՐ
Մուտքի ցուէր՝ նախապէս ապահովուած \$20 / Մուտքին \$25
Տոմսեր ապահովելու համար հեռաձայնել (818) 913-4024

Massis Weekly

Volume 31, No. 38

Saturday, OCTOBER 22, 2011

US Expects Armenia to Hold Democratic Parliamentary and Presidential Elections

YEREVAN -- The United States expects Armenia to hold parliamentary and presidential elections that will be widely regarded as democratic, according to John Heffern, the new U.S. ambassador in Yerevan.

"We are working together so that Armenia's important national elections 2012 and 2013 are the best elections ever and fully consistent with international standards," Heffern told journalists late on Monday just hours after handing his credentials to President Serzh Sarkisian.

He said the issue was on the agenda of his "very good" meetings with Sarkisian and Foreign Minister Edward Nalbandian.

Washington has been very critical of the Armenian authorities' handling of just about every major election held in the country since 1995. In particular, it considers the last presidential ballot held in 2008 "significantly flawed."

Heffern's predecessor, Marie Yovanovitch, stressed the importance of ending Armenian's post-Soviet culture of electoral fraud and effecting other "deep and difficult changes" in a speech last February.



New US Ambassador to Armenia
John Heffern

Heffern, who was confirmed as ambassador by the U.S. Senate late last month, cited Yovanovitch as reporting "some important progress here in Armenia in the last six months."

"So we hope and expect that Armenia will build on those favorable decisions that were made earlier this year to create a climate of fairness for the upcoming elections in 2012 and 2013," he said. "And the United States will do all that it can to help make these the best elections ever."

Ilham Aliyev:

Վուսմիշապուհ թագաւորի յանձնարարութեամբ Ասորիք կ'ուղարկուի Վահրիճ իշխանը, Դանիէլ եպիսկոպոսի մօտ գտնուող հայերէն կարծուած նշանագրերը բերելու համար: Ասորիքի մէջ Վահրիճ հանդիպելով յԱրեւել երեցին, Դանիէլէն կը վերցնէ այդ նշանագրերը ու կը բերէ Հայաստան: Շրջան մը այդ նշանագրերով փորձ կը կատարուի, բայց ոչ շատ ուշ կը պարզուի, թէ ատոնք չեն համապատասխաներ հայերէնի հնչիւնային համակարգին: Պէտք է ենթադրել, որ դանիէլեան նշանագրերը ասորական, աւելի ճիշդ՝ սեմական լեզուաւորներէն պատկանող գիրքեր էին, որոնց մէջ յաճախ բաղաձայններ կը համապատասխանէին կորկորային հնչոյթներու, իսկ հայերէն հնդեւրոպական լեզուին պատշաճ չէին նման հնչոյթներ. ուստի՝ փորձն ալ կը համոզէ Մաշտոցն ու գինք անմիջապէս օժանդակողները, թէ այսպէս կոչուած դանիէլեան նշանագրերը անգործնական էին հայերէնի հնչիւնային համակարգին համար:

ՀԱՅՈՑ ԱՅԲՈՒԲԵՆԻՆ ԳԻՒՏԸ

Վերոնշեալ փորձով, Ս. Մեսրոպ Մաշտոց միանգամայն անդրադարձած էր, որ իր արեւելումը այնուհետեւ պէտք է կեդրոնացնէ ոչ

ՀԱԲԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Շարունակում էք 14-էն

թէ ասորական, այլ յունական մշակույթի, անոր լեզուական հարուստ ժառանգութեան եւ առանձնապատկութիւններուն վրայ: Շուտով, Վրամշակութեան թագաւորի քաղաքական եւ տնտեսական օժանդակութեամբ եւ Սահակ Պարթեւ Կաթողիկոսի օրհնութեամբ, երանելին իր հետ վերցնելով խումբ մը աշակերտներ, 405 թուականին կը մեկնի Ասորիք՝ Ամիդ եւ Եդեսիա քաղաքները, եւ տեղւոյն հարուստ գրադարաններուն մէջ տքնաջան աշխատանքով ու աստուածային տեսիլքով 406 թուականին կը ստեղծէ հայոց նշանագրերը՝ 36 տառ (28 բաղաձայն եւ 8 ձայնաւոր), որոնք ամբողջապէս կը համապատասխանէին հայերէն լեզուի հնչիւնային տուեալներուն: Լեզուական այս գիւտը միաժամանակ կը համապատասխանէր յունարէնի այբբենարանի համակարգին եւ հերթակառուցութեան: Վերջինիս հետեւողութեամբ, Մաշտոց հայերէնի իւրաքանչիւր նշանագիրին կու տայ համապատասխան անուն՝ Այբ, Բեն, Գիմ, Դա, Եչ, Զա, Էւն, յունարէնի՝ Ալֆա, Բեդա, Գամմա, Դելտա տառանուանումներու նմանութեամբ: Ամէն մէկ տառին Մաշտոց կու տայ թուային համապատասխան արժէք՝ Ա=1-ի, Բ=10-ի, Գ=100-ի, Դ=1000-ի: Յունարէնին պէս հայերէնը կը գրուի ձախէն աջ՝ ի տարբերութիւն ասորերէն կամ սեմական այլ լեզուներու:

Այս սքանչելի գիւտէն ետք, Ս. Մեսրոպ իսկոյն անցնելով Սամոսատ, յունական մշակույթի կեդրոններէն մին, իր նորագիւտ նշանագրերը կու տայ Հռոփանոս անուն գեղագիրին, որ զոտնոք գեղագրելով, յղկելով ու գեղեցկացնելով կը վերադարձնէ հանձարեղ գիւտարարին:

Այնուհետեւ, Ս. Մեսրոպ երկու աշակերտներու՝ Յովսէփ Եկեղեցացիի եւ Յովսէփ Պաղնացիի հետ անմիջապէս կը ձեռնարկէ փորձառական առաջին թարգմանութեան ու դեռ եւս Սամոսատի մէջ կը թարգմանէ (հաւանաբար յունական բնագրէ) Աստուածաշունչի Առակաց գիրքի Ա. գլ. 2 համարը՝ «Ճանաչել իմաստութիւն եւ գիտատ, իմանալ զբանս հանձարոյ»: Սոյնը Մաշտոցի սուրբ ձեռքերով գրուած ոչ միայն հայերէն առաջին նախադասութիւնն է, այլ ան ընդհանրապէս կը հանդիսանայ թարգմանչաց Շարժումին եւ Ռակդարու երկունքին կարգախօսը:

Բայց ի՞նչ կը նշանակէ Սողոմոնի առակներէն վերցուած այս նախադասութիւնը. ինչո՞ւ համար այս ընտրութիւնը. արդեօք պարզ գուգադիպութիւն մը, թէ գաղափարական խորք մը ճանչցուած է հոն մեծն Մաշտոցին կողմէ: Իմաստուններուն քով պատահականութիւններ հազուադէպ կրնան ըլլալ: Հայոց դարձի պատմական իրադարձութիւնը, Ս. Գրիգոր Լուսաւորիչով եւ Տրդատ Գ.ի արքունական հրովարտակով, որքան ալ քաղաքական, հասարակական թէ մշակութային ազդակներ կարեւոր դեր խաղցած ըլլան, միեւնոյնն է՝ հիմնուած է հաւտաքի մը հզոր շարժումին՝ քրիստոնէական գաղափարախօսութեան վէմին վրայ: Հէթանոսութեան փլատակներուն վրայ նոր մշակույթ մը սկսած էր կերտուիլ, կեանքի նոր աշխարհահայեացք մը սկսած էր արգասաւոր-

րել հայութեան ոգին, ազգային նկարագիրը հետզհետէ որդեգրած էր նոր ինքնութիւն մը, որ ամբողջապէս շողախուած էր քրիստոնէական հաւատքին եւ Աւետարանին լոյսով: Ետդարձ մը կարելի չէր՝ ձուլուելու համար պարսկական մշակույթին կամ զրադաշտին տարհամոզիչ քարոզչութեան մէջ, ոչ ալ ենթարկուիլ բիւզանդացիին կրօնա-քաղաքական նկրտումներուն: Հայոց, կարելի է ըսել, համազգային շարժումը պէտք էր զգենուլ տոհմիկ տարագ մը, անշիտթելի իր տեսքով, փայլքով ու նոր հմայքով: Այս գաղափարախօսութիւնը սակայն ո՛չ սոսկ վարդապետութիւն մըն էր, ո՛չ ալ ընդամէնը վերացական տեսութիւն մը, այլ ան սրտի եւ մտքի խոր համոզում մըն էր՝ զսպանակուած քրիստոնէական հաւատքի ազատարար խորհուրդով:

Աստուածաշունչի Առակաց գիրքի Ա. գլ. 2 համարը՝ «Ճանաչել իմաստութիւն եւ գիտատ, իմանալ զբանս հանձարոյ», իր իմաստային կառուցով անբաժան կերպով գուգորդուած է նոյն Ա. գլխի 2-րդ պարբերութեան առաջին նախադասութեան (հմ. 7) հետ, որ խորքին մէջ հաստատում մըն է գիտակցելու կարողութիւն ունեցող մարդուն եւ ոչ թէ իմարին համար, թէ՛ «Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն, հանձար բարի ամենեցուն որ առնեն զնա. պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգոնութեան. գիմաստութիւն եւ գիտատ՝ ամպարիշտք անգոմենն»:

Ահաւասիկ, ինդրոյ առարկայ պարբերութիւնը պիտի փորձենք վերարտադրել աշխարհաբարով, ընկալելու համար իմաստային վերոյիշեալ կապը, անդրադառնալով թէ ինչի՞ վրայ կը հիմնուի Ս. Մեսրոպի ուղղորդած իմաստութիւնը ճանչնալու մեկնակէտը. այդ անտարակոյս՝ աննկուն հաւատքն է, Տիրոջ նկատմամբ երկիւղը:

«Իմաստութիւնն ու խրատը նանջնալու համար, Հանձարին խօսքերը հասկնալու համար, Իմաստութեան կրթութիւնը ընդունելու համար՝ Արդարութիւն, Իրաւունք եւ ուղղամտութիւն, ՄիաՄիտներուն խորագիտութիւն տալու համար, Երիտասարդներուն՝ գիտութիւն եւ շրջախայեացութիւն. Իմաստունը թող լսէ եւ աւելի իմաստուն ըլլայ, Իսկ հանձարեղը՝ առաջնորդութիւն ստանայ, Ի մտի ունենալով առակներն ու այլաբանութիւնները, Իմաստուններուն խօսքերն ու առեղծուածները:

Իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է, Որ բարի հանձար է բոլոր անոնց համար, որոնք գայն կը կիրարկեն. Իսկ զգոնութեան սկիզբը բարի աստուածապաշտութիւնն է, Բայց ամբարիշտները իմաստութիւնն ու խրատը կ'անգոմենն»:

ՎԵՐԱԴԱՐՁ ԴԷՊՏ ԶԱՅՐԵՆԻՔ
406 թուականին Մեսրոպ Մաշտոց նորաստեղծ նշանագրերով եւ իր աշակերտներուն խումբով կը վերադառնայ Հայաստան: Անհուն ուրախութիւն մը համակած է ազգին սիրտը: Պետական ամբողջ աւագանին՝ գլխաւորութեամբ

Վրամշակութեան արքայի, իսկ հոգեւոր դասը՝ հայրապետութեամբ Սահակ Պարթեւ Կաթողիկոսի, ազատներով եւ շինականներով երջանկութեան անանձնական պահեր կ'ապրին ընդունելու համար այն անգնահատելի ու անկապտելի բարիքը, զոր երանելին Մաշտոց Նախարանամութեան շնորհած խոր ներշնչումով ստեղծած էր իր ժողովուրդին համար: Պաշտօնական դիմաւորումը կը կատարուի Ռահ գետի ափին, ազգային տօնախմբութիւն մը նշելու տարողութեամբ եւ եղելութեան ամբողջական նշանակութեամբ: Ժամանակագիրը չի զլանար իր նկարագրութեամբ մէջ դէպքին տալու մնացուն արժէք մը, զայն համեմատելով աստուածաշնչական այն իրադարձութեան հետ, երբ Մովսէս, Սինայի բարձունքին, Տանաբանեայ Պատուիրաններն ընդունելով Աստուծոյն, եգիպտական ստրկութենէն ազատագրուած եւ դեռ անապատին մէջ դեգերող իր ժողովուրդին տալու համար միաստուածութեան կրօնին օրհնքը:

Ս. Մեսրոպ Մաշտոց, նոյն պատուիրաններուն պէս կարեւոր, իր հրաշալի գիւտը կ'ընծայէր իր ժողովուրդին, անոր դիմագիծը անեղծ պահելու եւ մշակույթին անպարտելի գէնքով ազգային գոյապայքարը դարերուն դաժանութեան մէջ յաջողապէս շարունակելու հեռանկարով:

Մեծ մարգարէն՝ Մովսէս, լեւրան ստորտը դառն յուսախաբութիւն մը կ'ապրի, գտնելով իր ժողովուրդը ոսկի հորթին շուրջը՝ աստուածուերացութեան յանցագործութեան մէջ. ան գայրոյթէն Տասնաբանեան կը զգեստնէ ու կը փշրէ նուէրը, զոր պարգեւած էր Եսայիէն այդ ապերախտ ժողովուրդին:

Ընդհակառակը, Ռահ գետի ափին օտարութենէն հայրենի տուն վերադարձող Ս. Մեսրոպ Մաշտոցին եւ իր աշակերտաց խումբին համար պատրաստուած դիմաւորումը, գրկաբաց ընդունելութիւնն ու անոնց բերած պարգեւին անզուգական արժէքին գնահատումը, հայ ժողովուրդի մշակութային հասունութեան պերճախօս ապացոյցներէն մին կը կազմէ մեր պատմութեան ոսկի էջերուն մէջ: Ի՞նչ իմաստ պիտի ունենար, եթէ համազգային տօնախմբութեան մը տարողութեամբ մաշտոցեան նուէրն ընդունելու ուրախութիւնը անգործածական դառնար կամ հետզհետէ դալկանար ու մոռացութեան տրուէր ժամանակի մաշտմին մէջ: Պիտի համոզուինք, որ ինք՝ երա-

նելին Մաշտոց, գլխաւորելով թարգմանիչներու եւ մտաւորականներու սքանչելի փաղանգ մը, հայոց արքունիքին, եկեղեցիին եւ ժողովուրդին պատրաստակամութեան դաշտին մէջ կիրարկելով արժեւորեց եւ արդիւնաւորեց մշակույթին արգասիքը, որ Եդեսիոյ գրադարաններու կիսամութիւն մէջ աստուածային ներշնչող լոյս մը շնորհած էր իրեն:

ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

Ժամանակ չկար վատնելու: Քաղաքական կացութիւնը, որուն մէջ օղակաւորուած էր Հայաստան՝ դաժան էր, ու դեռ կրնար թշնամին գայն յոռեգոյնին հասցնել, եթէ ազգին գոյութեան պահպանման գործօնը չաշխատէր ու չկատարէր այն դերը, որուն համար ան ստեղծագործուած էր: Հարկ էր անմիջապէս կազմակերպել մեղուաշան աշխատանք, գրեթէ ոչինչէն արարելու համար գէթ մշակութային անկախութիւնը ազգին, որուն նախաձեռնած էր Ս. Մեսրոպ Մաշտոց, գորեղ գաղափարակիցներ ունենալով Ս. Սահակ Պարթեւը եւ Վրամշակութեան արքան:

Առաջին գործը, որ ձեռնարկեցին թարգմանիչ վարդապետներ՝ Աստուածաշունչի հայերէն թարգմանութիւնն էր ասորական թարգմանութեան Փեշխտա կոչուած բնագրէն, 405-408 թուականներուն: Աստուածաշունչի Բ. թարգմանութիւնը իրականացաւ յունական Եօթանասնից կոչուող բնագրէն, զոր Եփեսոսի Գ. Տիեզերական ժողովին մասնակցելէ ետք Կ. Պոլսէն իրենց հետ Հայաստան բերած էին Մաշտոցի աշակերտները՝ Ղեւոնդ Վանանդեցին, Կորիւնը, Եզնիկ Կողբացին եւ Յովսէփ Պաղնացին: Աստուածաշունչի Ա. թարգմանութիւնը ասորական բնագրի հիման վրայ կը կոչուի Նախնական կամ Փութանակի թարգմանութիւն, բայց Բ.ը, յունական բնագրի հետեւողութեամբ՝ առաջինի բոլոր բնագիրները կը համեմատուին, կը սրբագրուին, կ'ամբողջացուին ստեղծելով գրեթէ նոր եւ կատարեալ թարգմանութիւն մը, որ իսկապէս նաեւ օտար մասնագէտներու գնահատումով «Թագուհի թարգմանութեանց» (արտապատմութիւնը Լա Կրոզինն է) կը կոչուի: Ահաւասիկ ա՛յս է յայտնի Սահակ-Մեսրոպեան Աստուածաշունչ մատենի օրինակը, որ հայերս կ'օգտագործենք ցայսօր:

(Շարունակելի)

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA
ՄԱՆՐԱՍԱՄՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱՁԱՅՆԵԼ
(626) 797-7680

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շարաքաքերին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
massis2@earthlink.net

ՀԱՅԻ ՀԱՅՐ

ԴԱԻԻԹԳԱՍՊԱՐԵԱՆ

«Հայր», «Հայն ու Հայր» ծանօթ են մեզ:

Բայց կայ նաև Հայի Հայր: Հայ մարդը Հայ մարդու հանդիպելիս, որտեղ էլ լինի, հայրենիքում թէ սփիւռքում, տանը թէ դրսում, եկեղեցում թէ շուկայում, սրճարանում թէ փողոցում, յատկապես որեւէ դպրոցում կամ խմբագրատանը, առաջին ու վերջին խօսքը լինում է Հայրենիքի մասին: Իրարից այնպես են լուրեր հարցնում, կարծես ուր որ է կորցնելու են ծանր հիւանդ մի թանկ հարագատի: «Ինչ կայ, չկայ», - հարցնում են մէկը միւսին, եւ բացում է գրոցի կտրիկը: Խօսում են ու խօսում, եւ խօսքի ամփոփումը գրեթէ միշտ նոյնն է. «Չէ, այս երկիրը երկիր չի դառն այս Այսինքն՝ ծանր հիւանդը չի ապաքինուի, ուրեմն... չեմ ուզում ամենավատ բանն օգտագործել... ուրեմն մի կերպ գոյատևում է»:

Եւ այսպէս Մովսէս Խորենացու «Ողբ»-ից մինչեւ 1915 թուական, մինչեւ... անկախութեան 20-ամեակ: Հայր եւ Հայի Հայր տարբեր են: Ամէն մի Հայ չէ, որ անձնականը կարող է ենթարկել ազգայինին: Հայաստանը միշտ էլ մնացել է այն Հայերի յոյսին, ովքեր գիտակցաբար պաշտպանել են ազգային արժէքները՝ մայրենի լեզուն, Արարատի պատիւը, պատմութեան մոխիրներից փորձել են գտնել ժողովրդին բոցավառող անթեղված կրակը: Ահա այստեղից էլ ոչ թե սոսկ Հայր, ով, պայմաններից դրդուած, կարող է հեռանալ ազգային արժէքներից եւ մտնել ուրիշների ստեղծած ապահով արժէքների մէջ, այլ Հայի Հայր՝ աւելի խորացած, աւելի պատասխանատու իր ազգային արժէքների հանդէպ եւ ճակատագրին ընդառաջ: Հայր կը հեռանայ իր հայրենիքից, լեզուից, պատմութիւնից, մէկ սերունդի կեանքի տեւողութեամբ կը դառնայ հեռակայ հայրենասէր, յետոյ կ'ընտելանայ նոր պայմաններին, կը խօսի ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն... կը վերածուի տուեալ երկրի ժրջան քաղաքացու եւ, ի վերջոյ, կ'ամաչի չիշել, որ ինքը ծագումով Հայ է:

Մինչդեռ Հայի Հայր կը տուկայ, որովհետեւ նրա տեղը իր Հայրենիքում է, նրա նպատակը լիարժէք Հայն է:

Հայից մինչեւ Հայի Հայր ընկած ճանապարհին, որը ոչ թէ տարածութիւն չափող քիլոմետրերով է հաշոււում, այլ գիտակցական խորութեամբ, մենք որակապէս պէտք է փոխուենք, այսինքն՝ ճշտուենք, շտկուենք, ուղղուենք... Ամբողջ միջնադարում մեր մատենագիրները նոյն էին աղաղակում, մենք հեռացել ենք ճշմարիտ ճանապարհից՝ դրանով էլ պայմանաւորուած են մեզ պատուհասած աղէտները: Աղէտները ազգային ողբերգութիւններն էին, որոնց դառնակսկիծ գոյժը մեզ էին հասցնում իրենց ժողովրդի ցաւից ճենճերացող եւ այդ ցաւը պատմութիւն դարձնող պատմագիրներն ու ժամանակագիրները՝ բոլորն անխտիր, անուկ առ անուկ, մատենան առ մատենան...:

Մենք չեղուեցինք ճշմարտութիւնից, կորցրեցինք բնական հաւասարակշռութիւնը, թեքուեցինք եւ, ինչպէս սիւն, տապալուեցինք, փշուր-փշուր եղանք: Հեռացանք

ինքներս մեզանից, դարձանք ուրիշ:

Մեր ընկած տեսակը սկսեցինք չսիրել, սկսեցինք մենք մեր անկեալ վիճակից խորշել եւ հեռանալ ու հեռանալ ինքներս մեզանից:

Մտանք ուրիշի, անգամ թշնամու ապահով պետութեան, գործող լեզուի, մինչեւիսկ հաւատի մէջ, օտարացանք, երբեմն դարձանք նաեւ մեր տեսակին թշնամի: Մեր ազգակերպարի խաթարման պատճառ, ձեւախեղման նախադրեալ, եւ մեր ազգակիցների գաւակներն ապահովութիւն եւ արժանապատուութիւն որոնելու հեռանկարով հեռացան Արարատից: Հեռացան, հեռացան եւ դեռ հեռանում են: Մենք, որ քանակապէս պիտի աճէինք ու շատանայինք մեր հայրենիքում, չաճեցինք ու չշատացանք, որովհետեւ կանաչ ոտը ծիլ էր տալիս ուրիշի դաշտերում՝ ծաղիկն ու պտուղը թողնելով այնտեղ: Մենք մեր սերունդներին տուեցինք ուրիշներին, դարձանք ամառուայ ցամաքող գէտ:

Եւ այսպէս՝ դարե՛ր շարունակ: Բիւզանդիայի հայահալած քաղաքականութիւնից սկսած, որ Հայոց արքայատոհմերն ու նախարարական տները կտրում էր հայրենի հողից եւ վերաբնակեցնում իր երկրի արեւելեան տարածքներում, մինչեւ թաթար մոնղոլներ, մինչեւ թուրքեր, ովքեր եկան, եկան ու նստեցին մեր հողերի վրայ, տարան մեր աղջիկներին, կերան մեր հացը եւ ամէն ինչ աւարտեցին 1915 թուականի ցեղասպանութեամբ ու Հայոց Հայրենիքի բռնազրուածով: Որպէսզի այսուհետ մեր երկրում ամենք քանակապէս, որպէս ժողովուրդ պէտք է որակապէս փոխուենք՝ ճշտուենք: Որակապէս ճշտուած, ճշմարիտ Հայի կողքին կը կանգնի միւս արժանաւոր Հայը, եւ ոչ թէ ամօթից կը հեռանայ: Այսպէս, աստիճանաբար որակը կը դառնայ քանակ, հակառակ դէպքում քանակը այլեւս չի դառնայ զլխաքանակ: Իսկ դրա համար այսօր առանց յապաղելու մեզ անհրաժեշտ է ստեղծել ազգային առողջացման ծրագիր: Մեր փրկութեան միջուկը առողջ հանրային եւ ազգային կառույց ձեւաւորելն է: Տապալուած սիւնը միմիայն այդ ճանապարհով կարելի է ոտքի կանգնեցնել:

Այս երազանքը հեշտ չէ իրականացնել, որովհետեւ համաշխարհայնացման գործընթացներն օրըսօրէ փոխում են մարդու մտաւոր կշիռն ապահովող արժէքային համակարգերը: Արժէքային համակարգ է կայացած պետութիւնը, հողորդակցութեան լայն շրջանակ ունեցող լեզուն, ժողովրդավարութեան ճիշտ սկզբունքներով կառուցուած հանրութիւնը, բարձր մշակույթը, օրէնքի անխտրականութիւնը, մարդու ապահովութեան ու վստահութեան երաշխիքը, մասնագիտական պահանջարկ ունեցող կրթութիւնը, որակեալ եւ մատչելի բժշկութիւնը, աշխատանքը, վարձատրութիւնը, կենցաղը, խնամքը...:

Արժէքային այս համակարգը ձեւաւորում է հասուն հանրութիւն, որի մեջ էլ ստեղծուած է մարդկային արժէքը՝ մարդը ինչ է, թէ ոչինչ: Մարդկային լիակատար արժէքները ձեւաւորում են միմիայն պետական, հանրային, ընկերային, մշակութային, անձնային հասուն

միջավայրերում: Ահա այդպիսի միջավայրերում անձնային պահանջներն իրականացնելու նպատակով մարդիկ հեռանում են իրենց կայանալու հնարաւորութիւնները կասեցնող, սահմանափակող, խոչընդոտող հայրենիքներից: Իրենց չկայացած պետութիւններից գնում են դէպի ապահովութիւն:

Փրկում է անձը, հերթական կորուստն է կրում ազգը:

Ահա այստեղ է փոքր ժողովուրդների չկայացածութեան շարունակական կախուածութիւնը, ինչը համարժէք է ողբերգութեան: Զարգացած երկրները կասեցնում են զարգանալ փորձող երկրներին՝ նրանց ոչ թէ արտադրողի, այլ սեւ շուկայի կարգավիճակով դատապարտելով չաւիտենական յետամնացութեան:

Ի՞նչ է կատարում Հայ ժողովրդի հետ:

Ժողովրդավարութիւնը, անկախութիւնը եւ անգամ Արցախի ազատագրումը ի՞նչ տուեցին նրան:

Հայութիւնը ոչ միայն չհամախմբուեց իր Հայրենիքում, այլեւ, ըստ պաշտօնական վիճակագրութեան, միայն 1991-2001 թուականներին Հայաստանից հեռացաւ մէկ միլիոն հարիւր հազարից աւելի մարդ: Այդ ընթացքը շարունակուեց նաեւ յաջորդ տասնամեակին՝ նոյն աղէտալի արագութեամբ:

Խորհրդային վերջին տարիներին Հայաստանը եւ Ղազախստանը ունէին երեք միլիոնից աւելի բնակչութիւն: 2011 թուականին Հայաստանում (Արցախի ու Ջաւախքի հետ մէկտեղ) առաջին դասարան սովորելու է դիմել 37. 000 երեխայ, Ղազախստանում՝ 260 000: Այս թուերն ինքնին ամէն ինչ ասում են, մանրամասնելու անհրաժեշտութիւն չկայ: Հայաստանի առկայ բնակչութեան իրական թիւը այդպէս էլ մեզանից զաղտնի է պահում, անգամ նախորդ մարդահամարի տուեալները անյայտ մնացին: Իսկ Ղազախստանի բնակչութիւնը մօտենում է վեց միլիոնի: Անկախութեան Սեպտեմբերին՝ 1991-ին, առաջին դասարան էր յաճախում շուրջ 70,000 աշակերտ, այսօր՝ 20 տարի անց, դրա կէսն է: 1991 թուականին «Ալբերենարան» դասագիրքը տպագրուել է 69,000 օրինակ, 2011-ին՝ 37000: Անկախութեան առաջին տարին դպրոցական էր աւելի քան՝ 600,000 աշակերտ, իսկ այսօր շրջանաւորում է 380,000-ը:

Ապարանի Մուլքի գիւղում ժամանակին եղել է երեք առաջին դասարան, այսօր առաջին դասարան է յաճախում երեք աշակերտ: Այս ողբալի պատկերն ամէնուր է: Հայաստանը աղետալիօրէն դատարկում է: Արտաշատցի գինուորակն է: Ծառայում է ռուսական սահմանապահ զօրամասում:

Տղային կրթութեան է տուել ռուս գինուորականների երեխաների համար նախատեսուած ռուսական դպրոցում: Տղան աւարտել է դպրոցը եւ հայերէն գրել, կարգալ չգիտի: Հայերէն տառերը չի ճանաչում: Հայրը շարունակում է՝ շուտով կ'աւարտեմ ծառայութիւնս, ընտանիքով կը տեղափոխուենք Ռուսաստան:

Հայր յարմարաւետութիւն սիրող է, նկարագրով հարմարուող համակերպուող է, ինչն էլ նրան մղում է ապահովութիւն որոնելու: Հայրենիքից դուրս: Հայը չունի արեւելեան ժողովուրդներին բնորոշ ազգային եւ կրօնական մոլեռանդութիւնը, աւելի անձնապաշտ է,

քան հրապարակային սիրանքի պատրաստ: Ինչպէս մարդը յանկարծ շոգում է մտքի սնանկութիւնից, այդպէս էլ ազգը նուազում է նուիրումի անպատրաստ որդիներ խեղճութիւնից:

Դուրսեցրինք ու ներսինները այնքան նսեմացրեցին պարզ Հայ մարդուն, որ նա անգամ իր մարդկային իրաւունքների պաշտպանութեան համար ոտքի չի կանգնում, էլ ուր մնաց թէ ընդվզի, բողբոջի, կռվի: Դարձել է չափազանց զգուշաւոր, վախկոտ ու հանդուրժող: Հակառակ դէպքում մէկ կիլոգրամը շուկայում նրա աչքի առջեւ չէր դառնայ 800 գրամ, չէր երթեւեկի ամօթալի պայմաններում՝ շնչահեղձ լինելու չափ իրար վրայ լցուած ուղեւորներ, երաժշտութիւն կոչուած խժալուր աղմուկի եւ իրարետեւերի ծխող վարորդի կշտամբանքների ուղեկցութեամբ: Դիմակայութեան ոգին շատ թոյլ է: Յանկարծ փորձի որեւէ ձեւով աւարկել կամ օրինական մի բան պահանջել՝ ծէսը սկսում է ինքնաստորացումից՝ էլ կեանքի՛դ մեռնեմ, էլ հոգո՛ւղ մեռնեմ, էլ ցա՛ւդ տանեմ, էլ ախպե՛ր ջան... Ահա այս պայմաններում է, որ ճանապարհային աւտոտեսուչը դառնում է լիտիութեան մարմնացում, պետական պաշտօնեան՝ անօրինական գործարքների հմուտ վարպետ, դրամաշորթութիւնը՝ կենսակերպ: Հապա մի դրանց ֆաստին նայէք: Եւ չկայ մէկը, որ զայրոյթից ձեռքը խփի սեղանին ու ասի՛ այս ի՞նչ էք անում, այս ո՞ւր հասանք:

Էլի յոյսը Հայի Հայի վրայ է: Նրա՛, ով կ'ընդվզի, բայց կը մնայ մեն-մենակ. բոլորը մտքով նրա կողմնակիցն են, բայց հրապարակաւ չեն պաշտպանի, ինչու վատամարդ դառնան: Հայն իր Հայրենիքում այնքան է ստորացուել ու բարոյական կաշկանդումների ենթարկուել հայրենի իշխանութիւնների կողմից, որ իր համար կենսակերպ է դարձել «Լուսթիւնը ոսկի է» գգուշաւոր իմաստութիւնը:

Իսկ եթէ մի գեղեցիկ օր էլ Հայի Հայը յոգնի ինքն իրենից եւ կողքին կանգնած Հային ու երեկուայ ու այսօրուայ սփիւռքահայերին ասի՛ էլ չեմ ուզում հերոս լինել, էլ չեմ ուզում այս երկրի ժամապահ լինել, էլ չեմ ուզում հայրենասիրութեան բարոյական դասեր տալ, եկէք ինքներդ տէր կանգնէք երկիր Նախրի դրսի ու ներսի սահմաններին, ի՞նչ պէտք է անեն, ի՞նչ պէտք է ասեն նրան... Երբեմն լինում է նաեւ այդպէս, եւ Հայի Հայը պարզապէս դառնում է Հայ, որպէսզի կարճ ժամանակ յետոյ դառնայ սփիւռքահայ, որի վերջնական արդարացումը հեռակայ հայրենասիրութիւնն է:

Այո՛, Հայութիւնն այդպէս էլ չի համախմբուել իր Հայրենիքում: Ասել, թէ Հայը չի սիրում իր Հայրենիքը՝ պատճառաբանութիւն չէ: Այս զարհուրելի տեղաշարժի դրդապատճառներն այլ տեղ են, որ տեսանելիօրէն արտայայտուած են սոցիալական եւ բարոյական ոլորտներում՝ գործազրկութիւն, չնչին աշխատավարձ, վայրենի բարոյական միջավայր, մարդկային արժանապատուութիւնը վիրաւորող բարբեր: Ազգային գոյավիճակի այս համընդհանուր թշուառութիւն այս համընդհանուր թշուառութիւնից իւրաքանչիւր ոք էլք է որոնում՝ ով ինչպէս կարող է: Մէկը քաղաքական ապաստան է խնդրում, միւսը հոգին է ծախում որեւէ աղանդի, երրորդը մեկնում է ար-

ՅՈՒՇԱՐՁԱՆ՝ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ

Շարունակում է 13-էն

արդարութիւնը, հաւասարութիւնը, կեցցէ ժողովուրդը) -բայց ի մտի չունին հայը - կը խօսի նաեւ 1909ի մասին երբ.

Կոտորածն անգութ, հայերը թող լան,

Աւերակ դարձաւ շքեղ Կիլիկիան:

«Ճիշդ կոտորածի օրերը՝ Խարբերդն ու Մեգիրէն, եւ ուրեմն որբանոցն ալ նախճիրի սարսափը կ'ապրէին»:

Գիրերու գիւտին հազար հինգ հարիւրամեակը յատուկ նիւթ է իրեն համար: Այդ օրերուն «Մեգիրէն Գիւլիկի Ստամպուլ կը կոչուէր»:

Կը խօսուի որբանոցի դպրոցին, անոր ուսուցչական կեանքին, իր եղբոր, վիճաբանութիւններու, մրցումներու, նկարագրելու կազմութեան, ուսուցչանոցի նախագահի ընտրութեան, ուսուցչի-աշակերտ փոխ յարաբերութեան, կատակի, Մէֆէրպէրլիկի, իր ուսանողութեան վերջին տարուան ու խել մը ալ հարցերու մասին:

Ու վերջապէս 1914ին Բենիամին Ժամկոչեան կը կապուի Հնչակեան Ուսանողական Միութեան:

Կարծէք հատոց պատմութեան տողանցքը ըլլայ մանրադիտակի տակ քննուած: Դէպքերու անվերջանալի շղթաներ, ապրուած օրերու տարիներ:

Գ. Մաս. Յեղափոխական Ձիւնուորը (Կարաւանը)

Փախուստը, «Հայութիւնը գրեթէ լրացաւ: Քաղաքներն ու գիւղերը դատարկուած են: Լսեցինք թէ մեր որբանոցին արեւմտեան կողմի այգիներուն մէջ ողջ-ողջ մանուկներ թաղուած են»:

Հեղինակը Տերսիմ կ'ապաստանի եւ ապա ի մը թեւարկութեան տակ կը մտնէ: Իր կացարանը կարելի չէ նկարագրել: Լուր կը տարածուի որ ուսները կը մօտենան, ուստի Բենիամին Ժամկոչեան ընկերոջ մը հետ կ'որոշէ անոնց երկուքի մէջ ու մտնել Անդրանիկի բանակին մէջ: Թշուառի ճամբորդութիւն արկածներով լի եւ անօթութիւն:

Կը միանայ Մուրատի խումբին, կը դիմաւորեն Անդրանիկը, որ հետիոտն կը մտնէ Կարին եւ ոչ թէ շքախումբով: Կը մասնակցի պատերազմին: Կը վիրաւորուի:

Անդրանիկէն փախուստ կու տան մեր գինուորները... ափսոս...

Կ'անցնի Թիֆլիս մինչ Կարին կը նահանջէ, արտավարակ վիճակ, երազներու փլուզում: Անդրանիկը մինակ մնացած էր մի քնափ ընկերներով:

Թիֆլիս հասած ըլլալով հեղինակը կը պատմէ տաճկահայերու վիճակին մասին որոնք Կովկաս կը

գտնուէին: Հնչակեանները թերթ կը հրատարակեն:

Անդրանիկ իր հետեւակներով կը հաստատուի Ղարաբաղ: Այստեղ անօթութիւն կար: Իսկ «Երեւանի կառավարութիւնը ոչ մէկ օգնութիւն կը հասցնէ թուրքերուն սիրտը չկոտրելու համար: Միայն հեռագիր հեռագրի վրայ կը դրկէ. «Հեռացի՛ր, կամ յանձնուէ: Թուրքերը երզում կ'ընեն թէ որեւէ վնաս պիտի չհասնի»:

Անդրանիկ ականջ չի կախեր: «Բայց երբ կը լսէ Շուշիի եւ շրջաններու հայոց կոտորման լուրը, քսանչորս ժամէն 36 գիւղ հրդեհել կու տայ, եւ լեռան գլուխը... վրանի մը տակ պատառ մը չոր հացը կրակի վրայ տաքցնելով ստամոքսը խաբել կը ջանայ»:

Երբ Երեւանի մէջ մատուցեցին Անդրանիկի գինուորները կը կողպան են ու գինաթափ կ'ընեն, գորավարը կը հասկնայ, որ ինք այս կառավարութեան օրերուն հոն չի կրնար ապրիլ: Կ'որոշէ Երեւանի վրայ քալել: Միջնորդներ չեն ձգեր առնել այդ քայլը: Ու ինք «ըմբոստութեան եւ անկեղծութեան մարմնացում, հայ յեղափոխութեան եւ անկախութեան թանձրացում... կը մեկնի արտասահման...»:

Հեղինակը իր գինուորական կեանքէն դէպքեր կը պատմէ: Կը ձերբակալուի ապա կ'ազատի: Կը մեկնի Թիֆլիսէն: Պոլիս կը մնայ երկու-քուկէս ամիս ուր հայ տարագիրներու կերակուր բաժնելու եւ գրագրութեան գործ մը կը գտնէ:

Կը գնահատուի իր գործին մէջ: Եւ հոս, Պոլսոյ մէջ Քսաններու առաջին սպահանդէսին ներուկ կ'ըլլայ: «Ուր Տ. Ջալէն Պատրիարք խնայաւ խոր յուզումով եւ խոստովանեցաւ. «Հնչակեանները միակ յատկատեսներն էին: Երբ մենք էնվէրն ու թալաթը բարեկամ կը հռչակէինք անոնց գործածած քանի մը հայերէն բառերը լսելով...»:

Գ. Մաս. Ուսուցում.

Ժամկոչեան Ատանայի Աբգարեան վարժարանի ուսուցիչ է: Դասի պահուն իր ձեռքը ցոյց տալով աշակերտի մը կը հարցնէ.

- Ի՞նչ է այս:
- Ձեռք, պատասխանեց:
- Ի՞նչ կ'ընեն ձեռքով:
- Մարդ կը սպաննեն:
- Ո՞վ սորվեցուց:
- Փոլիսները, պարոն:

Այսպէս մեծցան հայ տղաքը ջարդի օրերուն: Նոյնը Լիբանանի մէջ քաղաքացիական ներքին կռիւներու օրերուն: Տղաք կային Պէյրութի մէջ որոնք գէնքերու տեսակները գոց գիտէին, 15 տարեկան էին եւ ծովափի քաղաքին մէջ ծովը չէին տեսած: Դաժան է պատերազմը: Բայց սուրբ է պատերազմը երբ ազատագրութեան համար է:

Ի վերջոյ «Ֆրանսական պոռ-

նիկ դիւանագիտութեան ապուշ կարգադրութեամբ, իր գինուորներու եւ հայ կամաւորներու արեամբ գրաւուած Կիլիկիան վերադարձուեցաւ պարտուելով յաղթական թուրք կառավարութեան»:

Բենիամին Ժամկոչեանը կը հաստատուի Պէյրութ:

Հայ կեանքը կը վերսկսի շարժիլ-եկեղեցի, դպրոց, կուսակցութիւններ, Հ.Բ.Ը. Միութիւն, հայրենակցականներ: Ապրիլ պէտք էր: Վերակազմակերպում Հնչակեան կուսակցութեան:

Ժամկոչեանը ուսուցիչ է: Կը կազմակերպէ գուցէ առաջին անգամ Պէյրութի մէջ մարզահանդէս մը Յակոբ Աճէմեանի առաջնորդութեամբ:

Մի քանի որբանոցներու մէջ պաշտօնավարելէ ետք ի վերջոյ կը նշանակուի Սահակեան վարժարանի տնօրէն 1930 թ.ին, ուրկէ կ'արձակուի 1974ին: 44 տարիներ անձնուրաց կանքի վարժատուութիւն...

Կը հիմնէ Հայնի Հայրենակցական Միութիւնը: Կը հրատարակէ գիրքեր: Ուժ կու տայ թատրոնին: Հրատարակագիր է նաեւ: Գրիչը հատու է, նշտրակը՝ տեղին: Հոս է ամբողջ կէս դարու հայ կեանքը իր սեւ ու սպիտակ էջերով իրաւութեան զգեստաւորումով:

Կարդալ պէտք է այս հատորը մեր անմիջական անցեալը ճիշդ հասկնալու համար:

Նոր վերնագիր՝ Յօդուածներու Նմուշներ: Այստեղ կան պատմական, կրօնական, ազգասիրական, լեզուաբանական, հայրենասիրական բաժանմունքներ միշտ զգաստ մօտեցումներով:

Ապա կու գայ Վկայութիւններու բաժինը:

Ա. Բաժին. Հարազատներու Յիշատակներ, ստորագրուած Աստղիկ Թօփուզխանեան-Պուճիգանեանի, Արի Ստեփան Թօփուզխանեանի եւ Արա Յովհաննէս Թօփուզխանեաններու կողմէ:

Բ. Բաժին. Աշակերտներու, Պաշտօնակիցներու եւ Ծանօթներու Տպաւորութիւններ, ուր յուզումնալի յօդուածներ ստորագրած են, Պետրոս Մարգարեան Երեւանէն, Մ. Խաչատուրեան Պէյրութէն, Բ. Աշտիշատ Պէյրութէն, Շաքէ Վարսեան Երեւանէն, Ժիրայր Նայիրի Պէյրութէն, Կարապետ Հաննէսեան Պէյրութէն, Յովհաննէս Հաննէսեան Լոս Անճելլոսէն, Վեր. Սամուէլ Պագ-

գալեան Մարտէլլէն, իր առաջին սանը՝ Սամուէլ Յ. Փաշեան Պէյրութէն, Սարգիս Յ. Կիլիկիական Պուէնոս Այրէսէն, Արի Թօփուզխանեան Լիոնէն, Գէորգ Տարօնի Պէյրութէն, Ալպէր Մինասեան Լաս Վէկասէն, դարձեալ Գէորգ Տարօնի: Իրաւ եւ արժանի գովերգութիւն մը բոլորէն:

Գ. բաժին, Պարեզաստութիւն Հայրենի Կառավարութեան

Այս մասին արժանի գնահատակներ ստորագրած են Պատրիկ Ա. Կէնճեան Փարիզէն, Պէյրութի Սիմոնեան Պէյրութէն, որ ստանձնած է նաեւ ամբողջ գիրքին սրբագրութիւնը, Ժիրայր Նայիրի Պէյրութէն, «Հայրենիքի Ձայն»ը տուած է իմբագրական մը երկրորդ անգամ, նոյնպէս Ժիրայր Նայիրին:

Դ. Բաժին. Յետ Մահու Գնահատակներ

Խօսք ունին Վեր. Տիգրան Խնդրունի Պէյրութէն, «Արարատ» Օրաթերը կու տայ հանգուցեալին մահուան ու թաղման նկարագրութիւնը, Դոկտ. Մարտիրոս Գուշագեան Պէյրութէն, որ եղած է հանգուցեալին պաշտօնակիցը, Արաքսի Կիլիկեան՝ հանգուցեալին աշակերտը, Չերմագին խօսքերով, Պետրոս Մարգարեան՝ Երեւան, Սահակեանի շրջանաւարտներէն, Գ. Փոռթոյեան Պաղտատէն: Բոլորն ալ վեր առած են ուսուցչապետին բարեմասնութիւնները:

Ե. Բաժին. Մննդեան 100-ամեակի Յիշատակութիւն եւ Տօնակատարութիւն Մայր Հայրենիքի Մէջ

Եզրափակիչ դրուատանքի այս խօսքերը ստորագրած են բանաստեղծ ու մանկավարժ Պէյրութի Սիմոնեան, հրատարակագիր ու վաստակաշատ իմբագիր Ժիրայր Նայիրի, հրատարակիչ՝ Փարամազ Կ. Տօնիկեան եւ հայրենի եռանդուն, պատմական ուղիներ յայտնաբերող գրագէտ Գրիգոր Զանիկեան:

Այսօր Երեւանի մէջ ուսուցչապետ Բենիամին Ժամկոչեանի անունով դպրոց կայ, ուր իր կրօնասանդիկն ամէն օր կը խօսի իր բազմահարիւր աշակերտներուն հետ:

Անդրանիկին գինուորը հայրենի հողին, ի՛ր հողին վրայ կը փառաւորուի:

Այս հատորը հայ ընթերցողին համար Նոր Տարուան իրաւունք մըն է, որուն համար շնորհակալ ենք ըսելը քիչ է, շատ քիչ:

Թող օրհնուին այս հատորը լոյսին բերողները:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծանասակներու եւ մանուկներու Քայրափայտութիւնը բաժնով:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդափնի եւ մկանային ցաւեր:
Քնքնաշարժի վթարի նեւրալգիայով պատասխան
վնասուածքներու բաժնով:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՒ ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՀՐԱՄԱՅՈՒԿԱՆԸ

Շարունակում է 1-ին

շան ձեռքով:

ԱՄՆի Արդարադատության ամբաստանության անմիջապես և խստագոյն յայտարարության մը պատասխանեցին նախագահ Մահ-մուտ Ա.Մ.Է. Թրեյբլի և Իրանի հոգեւոր Առաջնորդ Ալի Նաժեբի:

Նախագահ Ա.Մ.Է. Թրեյբլի և Իրանի ղեկավարում ամբաստանությունը փորձեց վերադարձնել, որպես թէ նման կարգի մահափորձերու վարժուքներ ունեցող ամբաստանողին, խօսքը շեշտակի ուղղելով Ուաշինգթոնին: Իսկ Իրանի հոգեւոր Առաջնորդ Ալի Նաժեբի մի անգամ ընդմիջտ, նույնպես հերքելով Իրանի ղեկավարում տեսակի ամբաստանությունները, դիտել տուաւ, թէ անոնք բոլորը իմաստ գուրկ եւ դաւադրական բնույթ ունեն, եւ որոնք միտքի չի յաջողին մեկուսացնել Իրանի Իսլամական հանրապետությունը, որուն արտաքին գործոց նախարարը դիտել պիտի տար, թէ Իրանի ղեկավար դաւադրական ամբաստանությունը պարզապէս կը ծա-

ռայէր երկպառակութիւն ստեղծել արար դրացի եղբայրներու միջեւ: Պրն. նախարարը, ուստի, խորհուրդ կու տար Սեուտական Արաբիոյ լուրջ ու համբերատար, նաեւ դեռահասատ մօտեմալ կատարում ամբաստանության եւ չիյնալ ԱՄՆի լարած քաղաքական խաղի մէջ:

Ներկայ ժամանակներուն՝ երբ արարական աշխարհը կը տուայտի ինքնատարաբար դրամանցման արարական համագործակցութեամբ եւ միասնութեամբ աւելի շրջապատեց գտնուիլ զիրենց շրջապատող դաւադրական քաղաքական դարպասումներուն ղեկ, որոնք կրնան շատ հաւանաբար դիտումնաւոր կերպով միտքում ըլլալ արագացնելու համար իրենց տարաբար դրամանցման:

Կու գա՞յ կ'ըսէք արթնութեան, հ ա լ ա ֆ ա կ ա ն արժանապատուութեան եւ ներհամագործակցութեան հանգրուանը, կարենալ մասնակի էմ ընդհանուրից շ ա հ ը գերադասելու համար:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԿԸ Ե ՎԵՑ ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐ

Շարունակում է 1-ին

Հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեան անդրադարձաւ ժամանակներուն համահունչ՝ հոգեւորականներու պատրաստութեան կարեւոր խնդիրն եւ այդ առաքելութեան իրագործման ուղղուած վեհափառ Հայրապետի ջանքերուն: Այս առիթով Սրբազանը հիւրերուն տեղեկացուց Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Մարտ 17-19 ժողովին «Հոգեւոր սպասարկութեան պատրաստութեան հայրապետական հիմնադրամ» ստեղծելու որոշման մասին, որուն նախագահն է տիար Պերճ Սեդրակեան:

Իր խօսքին մէջ ՀԲԸՄ-ի նախագահը՝ անդրադառնալով Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան մշտական գորակցութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաքելութեան, տեղեկացուց, որ ՀԲԸՄ որոշած է իր կրթաթոշակային ծրագիրէն այս նպատակին յատկացնել մէկ միլիոն ԱՄՆ տոլար: Այս առիթով տէր եւ տիկին Նազար եւ Արտեմիս Նազարեանները հիմնադրամին նուիրեցին մէկ միլիոն ԱՄՆ տոլար: Մէկ միլիոն ԱՄՆ տոլարի նուիրատուութիւններ կատարեցին նաեւ Մայր Աթոռի բարերարներ տէր եւ տիկին Սարգիս եւ Հռութ Պետեւեանները, ինչպէս նաեւ տէր եւ տիկին Հրաչ եւ Սիւզան Թութայեանները: Տէր եւ տիկին Պերճ եւ Վերա Սեդրակեանները հիմնադրամին նուիրեցին 250 հազար ԱՄՆ տոլար գումար, հարիւր հազարական ԱՄՆ տոլար ընծայեցին:

տէր եւ տիկին Երուանդ եւ Մելիսա Տէմիրճեանները, տէր եւ տիկին Հայկ եւ Էլզա Թիթիզեանները, տէր եւ տիկին Նշան եւ Մարգարիտ Աթինիզեանները: Տէր եւ տիկին Հարրի եւ Էտնա Քելչեանները, Օսքար Թաթոսեանը եւ Ճերրի Տէմիրճեանը այս նպատակին յատկացուցին իւրաքանչիւրը չիտուն հազար ԱՄՆ տոլար: Տէր եւ տիկին Ճորճ եւ Ալիս Գեորգեանները, տէր եւ տիկին Զաւէն եւ Առլին Տատեգեանները, տէր եւ տիկին Բարբէն եւ Անահիտ Մկրեանները, դոկտ. եւ տիկին Յարութիւն եւ Շաքէ Մխճեանները հիմնադրամին նուիրաբերեցին քսանհինգ հազարական ԱՄՆ տոլար:

Հիմնադրամի նախագահը յայտնեց նաեւ, որ ԱՄՆ Հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի տեղեկութիւններով՝ նոյն նպատակին համար թեմի հայորդեաց կողմէն արդէն հաւաքուած է մէկ միլիոն ԱՄՆ տոլար:

Ճաշկերոյթի աւարտին ներկաներուն իր օրհնութիւնն ու պատգամը բերաւ Վեհափառ Հայրապետը՝ շնորհակալութիւն յայտնելով բարերար հայորդիներուն Մայր Աթոռ Ս. Էջմիածնին եւ Ամենայն Հայոց կաթողիկոսին ցուցաբերող մշտական գորակցութեան եւ եկեղեցականաց նոր սերունդի պատրաստութեան կարեւոր գործին ազնիւ ընծայեցրումներով սատարելու համար:

Ի նպատակ հոգեւորականաց պատրաստութեան հիմնադրամի, որուն ընդհանուր համակարգողն է տիկ. Լուս Գոնոնեան, նուիրատուութիւնները կը շարունակուին:

ՔՈՉԱՐԵԱՆ ԱՅԼԵՒ ՔԱՆԴԵԼՈՒ ԲԱՆ ԶԻ ԹՈՂԵԼ

Շարունակում է 5-ին

Թափուեցին քաղաքացիական պաշտպանութեան շատ աւելի բարձր էր, քան այսօր, սոցիալական արդարութիւնը շատ աւելի բարձր էր, քան այսօր:

Ու դրանում համոզուեցին ամբողջ յետխորհրդային երկրների տարածքում, համոզուեցին եւրոպացիները՝ շատ հարցերում, որ լիբերալ, ծայրայեղ լիբերալ համակարգերը իրենց հիմքում ունեն մի փիլիսոփայութիւն՝ մէկը պէտք է հարստանայ միւսի աղքատացման հաշուին, կապիտալի կուտակումը միայն այդպէս է տեղի ունենում, օդից գումարներ չեն ընկնում, մէկի գրպանից պէտք է գնայ միւսի գրպանը: Հիմա նրանք էլ են ուզում, որ արդարութիւն լինի բաշխման գործընթացում: Իսկ դա հնարաւոր է միայն սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական համակարգում, որովհետեւ համակարգի կանոններն են այդպիսին՝ հակառակ լիբերալ համակարգի: Մենք հասել ենք նոյնիսկ նրան, որ մեր Սահմանադրութեան մէջ գրուած է, որ մենաշնորհը չպէտք է շարաշահել: Այսինքն՝ մենաշնորհը թոյլ ենք տալիս, բայց չչարաշահելու պայմանով: Սա ի՞նչ բան է:

Հիմա ձեռք կուսակցութիւնը յստակ այդ գիծն է տանում՝ համակարգի փոփոխութիւն է պահանջում եւ իշխանափոխութեան խնդիր իր առջեւ չի՞ դնում:

Եւ համարում եմ, որ անիմաստ է անձերի փոփոխութեան համար քաղաքական պայքար տանելը: Դա անիմաստ է՝ 20 տարիները դա պայքարեցին, հազարաւոր մարդիկ փոխուեցին, պատգամաւորներ, նախարարներ, տեսէք ՀՀ-ն քանի նախարար ու վարչապետ է ունեցել, քանի հազար պատգամաւոր է ունեցել, գնալով մենք խրուում ենք այս լիբերալ ճահիճում, որը մեզ տանում է էլ աւելի ծանր վիճակների: Այն, որ արտագաղթը շարունակուած է, դա ցոյց է տալիս, որ խնդրի լուծման ճանապարհին չենք:

Պարոն Շիրիսանեան վերադառնալով ներքաղաքական խնդիրներին, Ռոբերտ Քոչարեանի վերադարձի հնարաւորութիւն տեսնում է:

Եւ սասցի, որ անձերից քիչ բան է կախուած, բայց համակարգը անձերի իր ընտրութիւնն ունի: Լիբերալ համակարգի համար Ռոբերտ Քոչարեանը հազուադէպ գործիչ էր Հայաստանում, որովհետեւ 10 տարում նա կարողացաւ հիմնովին ոչնչացնել ՀՀ արդիւնաբերութիւնը, իսկ համակարգի պահանջը դա էր, ոչնչացնել Հայաստանի գիտութիւնը, ամայացնել, ոչնչացնել գիւղատնտեսութիւնը, նա յայտարարեց, որ ստեղծում է նոր բուրժուա, եւ արդիւնքում մենք ունեցանք այսօրուայ Հայաստանը: Դա միայն սոցիալական, տնտեսական խնդիրների առումով: Իսկ թէ ինչպէս Հոկտեմբերի 27-ի դատաւարութիւնը դարձրեց թատերական ներկայացում, ինչպէս Ապրիլի 12-ը իրականացրեց, ինչպէս Մարտի 1-ը իրականացրեց եւ դրեց այդ մշտական գործողականը այս երկրի տակ, եւ ինչպէս ինքը կարողացաւ դառնալ ամենահարուստ մարդկանցից մէկը: Այս-

քանից յետոյ, եթէ յանկարծ նա մտածում է, որ պէտք է վերադառնայ, որովհետեւ դեռ անելիք ունի, միայն զարմանքը քիչ է. Ի՞նչ պէտք է այլեւս նա անի Հայաստանում, եթէ ինչ որ քանդուելու էր՝ քանդել է, ինչ-որ տարուելու է՝ տարել է, ի՞նչ պէտք է անի, եւ ո՞վ պէտք է նրան ձայն տայ: Ժողովուրդը շատ լաւ գիտի այս անունը, եւ ես կը զարմանամ, եթէ որեւէ քաղաքական ուժ յայտարարի, թէ Ռոբերտ Քոչարեանն իրենց համար շատ լաւ էր, եթէ նրա շարքերում վաղը մնացին շարքային քաղաքացիներ, ես կը զարմանամ, թէ ի՞նչ աստիճանի ենք հասցրել մեր ժողովուրդին:

Բայց այսօր կա՞նք քաղաքական ուժեր, որոնք համարում են Քոչարեանի քաղաքական յետարանը:

Այ, երբ նրանք վճռականորէն կանեն, որ արձակուում են Քոչարեանին, այդ ժամանակ մենք պէտք է մտածենք, թէ մեր ժողովուրդին ի՞նչ վիճակի ենք հասցրել: Շատ դժգոհ բան է:

Իսկ հնարաւոր համարում էք երբեւէ Լեւոն Տէր-Պետրոսեան-Սերժ Սարգսեան համագործակցութիւն, հակառակ Ռոբերտ Քոչարեանի վերադարձի:

Եւ չեմ կարծում, որ նման բան հնարաւոր է, որովհետեւ յետնորդական այս 4 տարիների ընթացքում, եթէ նրանց միջեւ կային փոքր հակասութիւններ, ապա դրանք շատ աւելի խորացել են, կամուրջներ այրեցին, չեմ կարծում, որ դա հնարաւոր լինի, բայց նոյնիսկ այդ միակողմանի երկիրը այս վիճակից հանելու ճանապարհ չի:

Իսկ համակարգի փոփոխութեան ձեռք առաջարկը, որը պահանջ է ըստ ձեզ, արե՞լ էք Լեւոն Տէր-Պետրոսեանին, ՀԱԿ-ին:

Մենք այդ առաջարկն արել ենք հայ հասարակութեանը՝ մամուլի միջոցով:

Եւ արձագանք կա՞նք:

Կայ, հասարակ քաղաքացիներից՝ շատ-շատ, կան նաեւ քաղաքական ուժեր, բայց մենք խնդիր չունենք շարժում կազմակերպելու այդ գաղափարի շուրջ եւ հանրահաւաքներով, երթերով գնալու դէպի իշխանութիւն, որովհետեւ այդ ճանապարհը տեւելու է շատ երկար եւ բերելու է նորանոր կորուստներ: Ասենք՝ ժողովուրդը տեսնում է, որ լաւ գաղափար է առաջարկուած, հաւաքուեցին, ոգեւորուեցին, գնացին եւ ոչինչ չստացուեց: Հիասթափութեան վնասը շատ աւելի մեծ է, որովհետեւ այդ մարդիկ վերջին յոյսը կորցնելով, հեռանալու են Հայաստանից: Մենք չենք ուզում նման զարգացում:

Այդ դէպքում ինքնապատասխան, գաղափարն առաջ քաշել ու չպայքարել այն իրականացնելու համար:

Բոլորովին: Աշխարհի տարբեր երկրներում կայ այդ փորձը՝ հանգիստ, խաղաղ, առանց ցնցումների համակարգից համակարգ են անցել: Ի դէպ, 1999 թուականին Վազգէն Սարգսեանի ու Կարէն Դեմիրճեանի իշխանութեան գալու ժամանակ, մենք մշակել էինք բազմաթիւ լրջագոյն ծրագրեր, որոնք բերելու էին համակարգի շրջադարձային փոփոխութեան: Եւ միայն Հոկտեմբերի 27-ը ձախողեց այդ բոլորը: Մենք արդէն մշակել էինք դրանք, եւ եթէ չլինեւ Հոկտեմբերի 27-ը, հիմա բոլորովին այլ Հայաստանում կ'ապրէինք:

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

Փասատինայի լաւ շրջանի մէջ, Washington փողոցի մօտերը
1 սենեակով վարձու տուն
Վարձը \$900 տոլար
 Մանրամասնութեան համար հեռաձայնել **(310) 466-7775**

ՄԱՐԿԵՐ



ՎԱՐՎԱՆՆԻ ՎԱՄՈՒՆԻՅԱՆ
(Ծննդով՝ Սեպտեմբեր 2, 1929, Ջահալ, Լիբանան)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին՝ ՎԱՐՎԱՆՆԻ ՎԱՄՈՒՆԻՅԱՆԻ մահը, որ պատահեցաւ Շաբաթ, Հոկտեմբեր 15, 2011ին, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուդարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ Հոկտեմբեր 19, 2011, առաւօտեան ժամը 10ին, Mountain View Mortuary, 2400 N. Fair Oaks Ave., Altadena, CA 91001, հեռ. 626-794-7133, ապա թաղումը՝ նոյն գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝
Ջաւահիրը՝ Սոնա եւ Կարպիս Պապահեքեան եւ ընտանիք
Ժապին եւ Սեդրակ Ժամկոչեան եւ ընտանիք
Մարո եւ Վարդան Պօօղլանեան եւ ընտանիք
Վարդան եւ Նորա Սամուէլեան եւ ընտանիք
Վազգէն եւ Քարօլին Սամուէլեան եւ ընտանիք
Պէքարեան եւ Գուգուլեան ընտանիքներ
Եւ համայն հարազատները եւ բարեկամները:

ՑԱԿԱՑԱԿԱՆ

ՎԱՐՎԱՆՆԻ ՎԱՄՈՒՆԻՅԱՆԻ մահուան առթիւ «Մասիս» իր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի գաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Քարօլին Սամուէլեաններուն:

ՑԱԿԱՑԱԿԱՆ

ՎԱՐՎԱՆՆԻ ՎԱՄՈՒՆԻՅԱՆԻ մահուան առթիւ Տէր եւ Տիկ. Կարօ եւ Անի Պէքարեան իրենց վշտակցութիւնը կը յայտնեն հանգուցեալի գաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Վազգէն եւ Քարօլին Սամուէլեաններուն:
Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱԿԱՑԱԿԱՆ

ՍԱՐԳԻՍ ԹԱԻՈՒՔՃԵԱՆԻ մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին, գաւակին, քրոջ եւ եղբայրներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Նուպար եւ Անի Թաւուքճեանին:

ՄԻՔԱՅԷԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍՈՒՐԱՏԵԱՆԻ ԳԱՅԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 7-էն

որ նոյն ջերմութեամբ պիտի շարունակէ յարաբերիլ նոր Առաջնորդին հետ, Առաքելական եւ Կաթողիկէ համայնքներուն առջեւ տալով միասնականութեան ու համագործակցութեան վկայութիւնը, յօգուտ եւ ի շինութիւն գաղութիս բոլոր տարրերուն եւ դասակարգերուն:

Երեկոյթին միջոցառումը գուարթ պահելու համար երգիչ Նշան ընդմիջումներուն լսելի կ'ընէր հայ եւ միջազգային երգերու փունջ մը:

«The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies»:
Այս անվճար ձեռնարկի մասին յաւելեալ տեղեկութիւնների համար կապուել NAASR հեռախօս 617-489-1610 կամ hq@naasr.org, Արարատ-էսքիճեան Թանգարան հեռախօս 818-838-4862 կամ aem@ararat-eskijian-museum.com, կամ Հայ Կրթական Հիմնարկութիւն հեռախօս 8186-242-41541:

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՍ ԵՒ ԱՆԻ ԳՐՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Շարունակուած էջ 8-էն

in Perspective», Հայ Ժողովուրդը Հին Ժամանակներից մինչեւ Արդի Ժամանակաշրջանը «The Armenian People from Ancient to Modern Times», Յիշել եւ Ժխտել «Remembrance and Denial», Յետ Նայել, Յառաջ Շարժուել «Looking Backward, Moving Forward», եւ Հայկական Յեղասպանութիւնը? Մշակութային եւ Բարոյական Աւանդները

«The Armenian Genocide: Cultural and Ethical Legacies»:
Այս անվճար ձեռնարկի մասին յաւելեալ տեղեկութիւնների համար կապուել NAASR հեռախօս 617-489-1610 կամ hq@naasr.org, Արարատ-էսքիճեան Թանգարան հեռախօս 818-838-4862 կամ aem@ararat-eskijian-museum.com, կամ Հայ Կրթական Հիմնարկութիւն հեռախօս 8186-242-41541:

ՄԱՐԿԵՐ

ՏԻՐՈՒՀԻ ԴԱԻԹԵԱՆ
(Ծննդով 1922 Լիբանան)

Սրտի խոր կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ մօր, մեծ մօր եւ հարազատին ՏԻՐՈՒՀԻ ԴԱԻԹԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Շաբաթ Հոկտեմբերի 15, 2011, Սիտնիի մէջ (Աւստրալիա):

Յուդարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցաւ տեղուցն Հայաստանեայց Առաքելական եկեղեցու մէջ, Երեքշաբթի, 18 Հոկտեմբեր, 2011:

Սգակիրներ՝
Տէր եւ Տիկ. Յարութ Դաւիթեան եւ զաւակները (Սիտնի)
Տիկին Սօսի Դաւիթեան (Սիտնի)
Տէր եւ Տիկ. Պարգեւ Դաւիթեան եւ զաւակը (Թորոնթօ) եւ համայն հարազատներն ու բարեկամները:

ՑԱԿԱՑԱԿԱՆ

ՏԻՐՈՒՀԻ ԴԱԻԹԵԱՆԻ մահուան առթիւ «Մասիս» իր վշտակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի գաւակներուն եւ ընտանեկան համայն պարագաներուն, մասնաւորաբար մեր աշխատակից իրաւաբան Պարգեւ Դաւիթեանին:

ՑԱԿԱՑԱԿԱՆ

ԵՂԻՍԱԲԷԹ ՔԷՕՐՕՂԼԵԱՆԻ մահուան առթիւ Կիլիկեան Բարեգործական Միութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնը կը յայտնէ հանգուցեալի համայն հարազատներուն, յատկապէս Վարդան եւ Թադէոս Քէօրօղլեաններուն:
Առ այդ \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

ՀԱՅԻ ՀԱՅՆ

Շարունակուած էջ 13-էն

տագնայ, բայց անվերադարձ աշխատանքի՝ իր հետ տանելով նաեւ ընտանիքը, չորրորդը իբր ընտանիքի միաւորման պատրուակով ճեղքում է շղթան...

Հայ մարդը իր ներկայ ու վաղուայ օրը չի կապում Հայոց Հայրենիքի հետ: Անգամ ազգային նկարագրի ու մայրենի լեզուի կորուստի հաշուին պատրաստ է փրկել իր մէջ թաքնուած մարդարածին, ով այս դէպքում նրա համար ազգութիւն չի ճանաչում:

Եւ այսպէս դարեր շարունակ Հայոց արիւնը տարածուել ու նստուածք է տուել աշխարհում: Թուրքը, ատրպէյճանցին, վրացին, քուրդը, արաբը, իմանալով, որ իրենց տատը Հայ է, գաղտնի են պահում, ամաչում են հանրօրէն ընդունել եւ միայն նեղ շրջանակներում են խոստովանում: Այդպիսի փաստերը շատ-շատ են: Ի՞նչ է, միթէ այդքան ամօթ է Հայկական ծագում ունենալը կամ Հայ լինելը:

Պարտութիւններ շատ ենք կրել, շատ ենք տրորուել, մեզ ստորացրել են եւ վիրաւորել են մեր ազգային արժանապատուութիւնը: Իսկ այդպիսիներին չեն սիրում, չեն ընդունում, արհամարհում են եւ հերթական անգամ նսեմացնում:
Եւ այսպէս...
Եւ այսպէս, երբ Հայերը հեռանում են Հայրենիքից, մնում է հարազատների ու ծննդավայրի կարօտը:

Երբ կարօտը կամաց-կամաց ցնդում է Արարատի գագաթին իջած մշուշի նման, մնում է մայրենի լեզուն:

Երբ օտար աշխարհում անգամ ընտանիքում մայրենի լեզուն տեղը գիջում է տուեալ երկրի լեզուին, մնում է հաւատը:

Երբ կորցնում են հաւատը, մնում է ազգային ոգին:

Երբ կորցնում են ազգային ոգին, մնում է ազգային յիշողութիւնը:

Երբ կորցնում են ազգային յիշողութիւնը, մնում է ականդոյթը եւ սովորոյթը:

Երբ կորցնում են ականդոյթն ու սովորոյթը, մնում է հեռաւոր մի ազգակ, որ նրանց երբեմն-երբեմն յիշեցնում է իրենց ծագումնաբանութիւնը:

Երբ Հայերը կորցնում են իրենց ծագումնաբանական յիշողութիւնը, մնում են նախնիներից ժառանգութիւն մնացած ինչ-ինչ իրեր եւ պատմութիւններ, ինչը եւ առիթից առիթ ցանկութիւն է առնջացնում հանրագիտարաններում որոնելու «Հայաստան» բառայօդուածը, իսկ քարտէզի վրայ գտնելու Հայաստանի տեղը:

Իսկ երբ Հայերը դադարում են կարօտել, երբ հեռանում են մայրենի լեզուից, հաւատից, ազգային ոգուց, ազգային յիշողութիւնից, ականդոյթից ու սովորոյթից, մոռանում իրենց ծագումնաբանութիւնը եւ քարտէզի վրայ դժուարութեամբ են գտնում Արարատի տեղը, նրանք այլեւս Հայեր չեն... Վաղուց արդէն Հայեր չեն...

Բայց սա ամենեւին էլ վերջը չէ:

Որքան էլ Հայը դառնայ ուռս, ամերիկացի, անգլիացի, ֆրանսացի, գերմանացի, յոյն, թուրք, քուրդ, վրացի, այնուամենայնիւ խորքի խորունկ մի շերտում յիշում է իր Հայկական ծագման առասպելը: Այդպէս Նոյեան տապանն իջաւ Արարատից, ու շարունակուեց մարդկային քաղաքակրթութիւնը: Հայաստանն այսօր դարձել է Նոյեան տապանի պէս մի բան, որտեղից հեռանում են Արարատի որդիները: Եւ այսպէս կը լինի այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը չի դարձել ուժեղ, զարգացած եւ ժամանակակից երկիր:

Առողջ երկիր:
Այդ յոյսն ու հաւատը իր մէջ պահում է ոչ թէ Հայը, ով ենթակայ է ամէն տեսակի ազգակործան գայթակղութիւնների, այլ՝ Հայի Հայը, ով, հակառակ պատմութեան հողմերի ու փոթորիկների, շարունակում է իր արմատները մխրճած պահել այս դժուար, այս չափազանց դժուար, բայց առասպելական ու երանելի հողի մէջ...



**Ճաշկերույթ
Պարահանդես
Նուիրուած**

Հ.Մ.Մ.ի 90 Ամեակին
կազմակերպութեամբ

Հ.Մ.Մ.ի Շրջանային Վարչութեան

Օրուան հանդիսութիւնը պիտի խանդավառէ
յատուկ Լիբանանէն ժամանած, սիրուած երգիչ՝

Պերճ Նազգաշեան

**Տեղի կ'ունենայ Շաբաթ, Նոյեմբեր 26, 2011
երեկոյեան ժամը 8:30 էն սկսեալ**

Deluxe Banquet Hall

Շքեղ սրահէն ներս՝

237 East Olive Avenue, Burbank, CA 91502

Մանրամասնութեան համար հեռաձայնել
(626) 485-6434 (818) 324-057

Մուտքի Նուէր \$ 75.00